№ 39 ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21 № 39

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպաստենք. Վերջին տեղեկութիւններ. Գիւղական ցաւերից, Սովը Ջիվանշիրի, Խաչէնի և Թարթառի ձորակներում. Մամուլ. Պետական Դումայի շուրջը. Կուսակցութիւնների և դաշնակցութիւնների շուրջը. Ռումբը կայսերական երկաթուղային գծի վրա. Արդեօք այդպէս է։ Թատրոն և երաժշտութիւն. Քամինելի արարք. Բագուի գծութիւններից. Տեղեկութիւններ գաւառից. Շատերից մին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Նամակ Գերմանիայից—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆՊԱՍՏԵՆՔ

I

Այժմ, երբ դպրոցները բացվել են և դպրոցական ուսուցիչը նորից կարող է գործել գիւղական աշխարհում, նա նորից նշանակութիւն է ստանում իբրև կուլտուրական ոյժ մեր իրականութեան մէջ։

Գիւղական ուսուցիչը միացած գիւղական բանիմաց տարրերի հետ կարող է կազմակերպել մի շարք կուլտուրական գործեր և այդպիսով բարձրացնել գիւղի թէ մտաւոր և թէ տնտեսական մակարդակը։

Սակայն, որպէսզի ուսուցիչը իբրև նախաձեռնող, իբրև կազմակերպող, իբրև ղեկավար կարողանայ դեր կատարել գիւղում, անհրաժեշտ է, որ նա ինքն էլ որոշ աստիճան պատրաստութիւն ունենայ և ընդունակ լինի թէ բուն դպրոցական և թէ ուրիշ գործերում օգտակար լինել գիւղի համար։

Իսկ գիւղի պահանջները և հարցասիրութիւնը շատ մեծացել է վերջին ժամանակները։ Բազմացել են այն հարցերը, որոնք քննութեան և մշակութեան կարօտութիւն են զգում գիւղում։

II

Մեղադրել ուսուցչին, թէ ինչու նա չունի այս ու այն պատրաստութիւնը, մենք ներկայումս չենք կարող։ Մենք լաւ գիտենք, որ դպրոցների փակվելով ընդհատվեց մեր ուսուցչական դասի կանոնաւոր զարգացման գործը, շատերը հեռացան գործունէութեան ուրիշ ասպարէզներ և այժմ վերադառնալով նորից դէպի դպրոցները, միանգամից անկարող են ամեն բան կարգի գնել։

Բայց այն, ինչ որ անկարելի եղաւ առաջին կամ երկրորդ տարիներում, պէտք է լրացնել այժմ, ձեռնարկելով մի շարք միջոցների և ձեռք բերելու թերին ու պակասը։

Անկասկած, ինքնակրթութիւնը կարող է զգալի կերպով օգնել իւրաքանչիւր ուսուցչի իր նպատակին մօտենալու համար, բայց դա բաւական չէ։

Կարևոր են նաև ուրիշ միջոցներ, որոնցից մէկն է ամառային դասընթացքների կազմակերպութիւնը։

III

Արդարև, եթէ կարելի լինէր ուսուցչական խմբերի համար գաւառական քաղաքներում կամ այնպիսի կենտրոններում, ինչպէս որ Թիֆլիսն է, կազմակերպել մի շարք դասընթացքներ թէ մանկավարժութիւնից և թէ ուրիշ գիտելիքներից, կարելի կը լինէր տալ ուսուցչի ձեռքը ուժեղ զէնք իր կուլտուրական դերը բեղմնաւոր կերպով կատարելու համար ժողովրդական մասսաներում։

Այդ դասընթացքները կարող էին վերաբերել թէ մտաւոր զարգացման ասպարէզներին և թէ զանազան արհեստներին, օրինակ, գիւղատնտեսութեան զանազան ճիւղերին, որոնք ունեն նշանակութիւն տեղական ժողովրդի համար։

Այդպիսի գիտելիքների պահանջը զգացել են արդէն ուսուցիչների մի քանի խմբերը և այդ իմաստով նոյնիսկ դիմումներ են անում մասնագէտների այս ու այն հարցի վերաբերութեամբ։

IV

Լաւ կը լինէր, որ Թիֆլիսի ուսուցիչները իրանց վրա նախաձեռնութիւն վերցնէին սկիզբը դնելու մի այդպիսի համակրելի գործի և փորձ անէին կազմակերպելու գաւառական ուսուցիչների համար մի քանի դասընթացքներ առաջիկայ ամառվայ ընթացքում։

Առաջին փորձին այնուհետև կը հետևէին յաջորդ փորձերը և յետոյ կարելի կը լինէր նոյնը իրագործել գաւառական կենտրոններում։

Եթէ մենք ուսուցչին վերագրում ենք կուլտուրական դեր գիւղում, եթէ մենք յորդորում ենք նրան գործելու, եթէ մենք նրանից պահանջներ ենք անում, պէտք է աշխատենք մեր կողմից օգնել ուսուցչին, որ նա կարողանայ առանց մեծ դժուարութիւնների և զոհաբերութիւնների ստանալ ու իւրացնել այն, ինչ որ անհրաժեշտ է նրա՝ իբրև կուլտուրական գործողի համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քութայիս, 19 փետրվարի.—Ցերեկվայ ժամը 2-ին 4 զինված անյայտ մարդկանց ձեռքով կողոպտվեց ազնուականների գիմնազիայի գործավարը, որից գողացան 3111 ռուբլի։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 19 փետրվարի.—Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան կենտրոնական կօմիտէի նիստում, հոկտեմբերականների բոլոր ներկայացուցիչների մասնակցութեամբ և Ալեքսանդր Գուչկովի նախագահութեամբ, վերջնականապէս որոշվեց Դումայում կազմել հոկտեմբերականների պարլամենտական ֆրակցիա, իբրև ինքնուրոյն միութիւն։ Ֆրակցիայի բիւրոյի մէջ մտան. Խոմեակով, Կապուստին, Բօգատօվ, Վարօն-Սեկրէտ, Իվանեցկի և Գրուտինսկի։ Օրինագծերը մշակելու համար ընտրված յատուկ մասնաժողովի անդամներ ընտրվեցին. Խոմեակով, Լէյն, Խրուալէնսկի, Պուրիշկէվիչ և կոմս Բօբրինսկի։ Աշխատաւոր խմբակը և նարօդնիկների բլօկը հիմնում են սեփական լրագիր։ («Հ. Գ.»)

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Դօրիս, փետրվարի 13-ին

Զանգեզուրը ապրում է ճգնաժամի րօպէներում. մարդկային թանգ կեանքը այժմ համարեա չէ գնահատվում։ Թուրք-հայկական անմիտ կոտորածը ըստ երևոյթին դադարել է շնորհիւ երկու ազգերի ինքնագիտակցութեան եկած տարրերի և կառավարութեան ներկայացուցիչների եռանդուն ջանքերի։

Բնականաբար երկու դրացի ազգերը պիտի ուրախանային, որ վերջապէս աջողվել է նրանց կտրել չէյթանի ոտը, որից յետոյ ծծված, քամված, թուլացած ազգերը կարող են ազատ շունչ քաշել, հանգստանալ ու կազդուրվել։

Սակայն այս անգամ էլ բնութիւնը խոչընդոտ հանդիսացաւ ուժասպառ եղած ժողովրդի կազդուրվելուն. նա ասաց՝ «ցաւ տամ, ցաւդ մոռացիր», և տուեց խեղճ ու կրակ ժողովրդին մի նոր ցաւ, որը կրում է «սով» անունը։

Այո, ժողովուրդը մի թշնամուց ազատվեց և մի ուրիշ աւելի հզօր թշնամու ձեռքը ընկաւ. սրանցից առաջին թշնամին երևում էր, միջոց և հնարաւորութիւն կար դիմադրելու, ուստի և դիմադրում էր ժողովուրդը, իսկ երկրորդը աներևոյթ է և նրան դիմադրելու ոչ մի հնարաւորութիւն չկայ. սրան դիմադրելու զէնքը միմիայն նպաստն է, որ մեզանում դժբախտաբար կրիայի քայլերով է առաջ ընթանում։

Թէ ինչ է գուշակում գարունը, այդ կարելի է հասկանալ նրանից, որ գիւղացին այժմ ոչ միայն ուտելու հաց, այլև սերմացու չունի, քանի որ վերջինս միայն կարող է ազատել սովեալներին գալիք աւելի մեծ չարիքից։

Մենք շատ անգամ ենք կրկնել, որ գարունը մօտենում է, գիւղացուն սերմացու է հարկաւոր, տուէք նրան այդ և, եթէ բնութիւնը իր երեսը կրկին շուռ չի տայ նրանից, նա աւելի երկար ժամանակով կազատվի սովի ճիրաններից։

Իսկ մեր ձայնը դժուար է արձագանք գտնում, ուստի և գիւղացու դրութիւնը գրեթէ նոյնն է մնում։

Մեր երկար վայնասուններից յետոյ տեղիս յարգելի գաւառապետ պ. Միտկեվիչը պ. պ. հաշտարար միջնորդների և հարկային տեսչի հետ միասին ձեռնարկել են մի մեծ բարի գործ. նրանք միջնորդել և ստացել են կառավարութիւնից 52,610 ռուբլի նպաստ, տնտեսապէս քայքայված գիւղերին բաշխելու, սակայն ցաւօք սրտի չենք կարող չը յայտնել, որ այստեղ ևս ազգերի խտրութիւն է երևում։

Ո՞վ կարող է անուանել տնտեսապէս աւելի քայքայված գիւղ, քան Թշուառ Մինքենդը. սակայն անսահման է մեր զարմանքը, երբ տեսնում ենք նրան չեն տալիս նպաստ, պատճառելով, որ նրանք Մինքենդում չեն ապրում. իսկ որևէ թուրքական Աւէն, Հօչազ գիւղերին, որոնք ոչ մի աւերածութեան չեն ենթարկվել, տալիս են իւրաքանչիւր շնչին չորսական ռուբլի. անէծք հայի բաղդին...։

Ո՛չ, մենք չենք կարող հաւատալ, որ ազնիւ մարդիկ, մանաւանդ պ. գաւառապետը բարի գործի գլուխն անցնելով թոյլ կըտան, որ ընդհանուր նպաստը խտրական նպատակից շեղվի։

Յ. Գրիգորեան

ՍՈՎԸ ՋԻՎԱՆՇԻՐԻ, ԽԱՉԷՆԻ ԵՒ ԹԱՌԹԱՌԻ ՁՈՐԱԿՆԵՐՈՒՄ

Առաջաձոր, փետրվարի 12-ին

Սովը օրէց օր սաստկանում է։ Յիշեալ ձորակների բոլոր գիւղացիները համարեա քաղցած դրութեան մէջ են։ Ազգաբնակութեան մօտաւորապէս տասը տոկոսը կարողանում է մի կերպ իրանով ապրել։ «Իրանով ապրել» ասելով, ոչ թէ հաց ունենն ուտելու, այլ միջոց ունենն հաց ձեռք բերելու։ Երեխաները լաց են լինում, հաց են ուզում ծնողներից, իսկ վերջինները հնարաւորութիւն չունեն հաց ճարելու. Նրանք միջոց չունեն հաց գնելու, իսկ ապառիկ էլ տուող չը կայ։ Օրերս Նըպաստամատոյց Յանձնաժողովի մարդիկ ծայրայեղ չքաւորներին ցորեն տուին, ընտանիքի ամեն մի անդամին՝ ամսական 16 ֆունտ հաշւած։ Պէտք է նկատել, որ այդ հաշւով հաց տալը «միայն չոր հացով» կերակրվող՝ ծայրայեղ չքաւորներին հազիւ թէ բաւականանայ, սակայն այդպիսի նպաստ ստացողները էլի մի առժամանակ կարող են ապրել, իրանց գոյութիւնը պահպանել։

Վերև ասացի, որ հացի նպաստ են ստանում միայն ծայրայեղ չքաւորները և բացի այդ յիշեցի, որ համարեա բոլոր ազգաբնակութիւնը քաղցած դրութեան մէջ է։ Ծայրայեղ աղքատները էլի մի բան ստացան և թէ այսպէս թէ այնպէս կարող են մի առժամանակ ապրել, իրանց գոյութիւնը պահպանել, իսկ մնացածները ինչով պէտք է ապրեն... Ամեն օր գեղջկուհիներից մի ամբոխ կազմված գնում են սուգ ու շիւանով գիւղի ուսուցչի դուռը և դիմում են նրան, որպէսզի նա միջոցների դիմէ, միջոցներ ձեռք առնէ, որ իրանք սովամահ չը լինեն, քաղցածութիւնից չը կոտորվեն։ Ուսուցիչը խոստանում է յայտարարել այդ մասին լրագրութեան միջոցով և օգնութիւն խնդրել Նպաստամատոյց Յանձնաժողովից, Բարեգործական ընկերութիւնից, Կուլտուրական Միութիւնից, ունևոր ու բարեգործ մարդկերանցից և այլն և այլն...։ Եւ ապա կանանց ամբոխը հեռանալով ուսուցչի տնից՝ գնում են աղի արցունքը աչքերին ու աղաղակելով դէպի կալուածատիրոջ կառավարիչ Ա. Ս..ցի դուռը... Թէ վերջինս ինչ է խոստանում, չը գիտեմ... Ո՛հ, խաբուսիկ յոյսեր, մինչ՞ երբ պէտք է սովից թուլացած գիւղացիները քաղցածով ապրեն...

Կրակ է թափվում մարդու գլխին... երբ նա տեսնում է մերկ ու ոտաբոբիկ գիւղացու երեխային քաղցածութիւնից թուլացած, թառամած ու դողոր ընկած... Եւ մինչև երբ խաբենք այդ թշուառներին, դժբախտներին, մինչև երբ նրանք ապրեն խաբուսիկ յոյսերով ու վերջապէս մինչև երբ երկու հաց ունեցողը մէկը չունեցողին տայ։ Չէ՞ որ այդպիսի կենցաղավարական պարագաներում՝ մի երկու շաբաթվայ հացի պաշար ունեցողներն էլ կը հատնի ու այնուհետև բոլորի վիճակը մէկ դառնալով, դրութիւնը աւելի ողբալի կը դառնայ... Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, հարկաւոր է շուտափոյթ միջոցներ ձեռք առնել, թէ չէ յիշեալ ձորակների ապագան լաւ չէ գուշակում։

Ինչպէս խոստացել եմ կանանց ամբոխին՝ յայտարարել լրագրութեան միջոցով յիշեալ սովեալների թշուառ ու կրիտիկական վիճակը ու այդպիսով օգնութիւն խնդրել նրանց համար պատշաճաւոր բարեգործական հաստատութիւններից, ունևոր ու բարեգործ անձնաւորութիւններից և այլն, ուստի և սրանով յայտարարում եմ բանիմաց և բարեգործ հասարակութեանը այդ մասին ու թախանձանքով օգնութիւն եմ աղերսում այդ սովեալների համար, թէ չէ ձեռքից ընկնում է մի մեծ ժողովուրդ... Հաւատացէք՝ ընկնում է...։ Օգնութիւն ու օգնութիւն եմ աղերսում ու անհամբեր հետևանքին սպասում... Եթէ շուտով հացի կամ դրամական նպաստ չը ստացվի, ես ստիպված եմ լինելու փախչելու տեղիցս, միայն թէ չը տեսնեմ իմ դասն և փողոցներում թշուառ սովեալներին ողբալի ու տագնապալից վիճակի ճիրաններում... Դժուար է բոլոր եղելութիւնները նկարագրելը... Մարդ պէտք է իր աչքով տեսնէ, հաւատայ ու ապա ողբայ...

Խաչէնի ձորակի՝ առաջաձորցիք, կիչանեցիք, հայադեցիք, ծմակահողեցիք, շահմասուրեցիք, վանքցիք, գանձաքարեցիք, թըմլըղուեցիք և քօլատակեցիք ու Թառթառի ձորակի՝ հաթերքեցիք, կճաղատեցիք, վըղըհասեցիք, ղըզըլղայեցիք, դըրըմբոնեցիք, հոռաթաղեցիք և այլ գիւղացիք աղի արցունքը աչքերին դիմում են բարեգործական հաստատութիւններին և բարեգործ ու ունևոր մարդկանց՝ մտնել նրանց ողբալի դրութեան մէջ ու այսպիսի սև տարիներին պահպանել նրանց թշուառ ընտանիքների գոյութիւնը... Նրանք օգնութիւն են հայցում ու անհամբեր սպասում...

Բաղդածութիւնից հիւանդութիւններ են երևան եկել... Սպասվում են սարսափելի զոհեր այդ լեռնային ձորակներում։ Մինչև հայ-թուրքական արիւնահեղ կօնֆլիկտները, յիշեալ ձորակներում, ինչպէս անպտղաբեր լեռնավայրերում, որտեղ կարկուտը, հեղեղը և կամ բնութեան ուրիշ պատահարները և աննպաստ կլիմայական պայմանները համարեա ամեն տարի ոչնչացնում են ցանքերը ու բոյսերը, հացի մեծ կարիք է զգացվել և տեղիս ազգաբնակութիւնը աշխատանք ունենալով, գնելիս է եղել իր ուտելու հացը Ջիվանշիրի տափարակային դաշտավայրերում գտնըվող պտղաբեր Ջրաբերդի հարուստ գիւղերից և ուրիշ տեղերից, սակայն այսպիսի սև տարիներում յիշեալ ժողովուրդը հաց, աշխատանք ու միջոց չունենալով, մնացել է քաղցած. պէտք է անմիջապէս օգնել նրան...

Նախորդ թղթակցութեանս մէջ գրել էի, թէ ինչպէս մի վանքի անձնաւորութիւն, տեսնելով որ իր երեխաները անդադար հաց են պահանջում, լաց, շուգ ու շիւանը գցած և ինքը հնարաւորութիւն ու միջոց չունենալով հաց ճարելու, իրան նետում է բորբոքված կրակի մէջ՝ վերջ տալու իր կեանքին և այդպիսով չը տեսնել իր թշուառ ու անբախտ որդիկերանցը սովի տագնապի ճիրաններում։ Բարեբաղդաբար շուտ վրա են հասնում և ազատում կիսամեռ Մէյիդանց Բիւքին կրակի բոցերից։ Այժմ Բիւքի-ապերը սաստիկ հիւանդ է... Ժողովված հացով պահպանվում է նրա ընտանիքի գոյութիւնը։

Թառթառի ձորակում սովից մի քանի զոհեր են եղել...

Թախանձագին աղերսում եմ, խնդրում եմ միջնորդել շուտ նպաստներ հասցնելու, թէ չէ յիշեալ ձորակների ապագան լաւ չէ գուշակում...

Հարկաւոր է շուտափոյթ օգնութիւն, օգնութիւն և օգնութիւն... Անհամբեր սպասում ենք...

Բ. Զ.

ՄԱՄՈՒԼ

Մայրաքաղաքի լրագիրները արդէն հաղորդեցին, որ պրեմիէր Ստօլ՝պինը կարողացել է համոզել շրջաններին, որ կառավարութեան դրութիւնը այնքան էլ ծանր չէ և չը նայելով Դումայի օպպօզիցիօն կազմին, այնուամենայնիւ նա հնարաւորութիւն կունենայ ղեկավարել Դուման։ Աւելորդ է ասել անգամ, որ այդ ծրագիրները ոչ այլ ինչ են, բայց եթէ անաջող մանեօվրներ և անտեղի յոյսեր։ Ո՞ւմ վրա է ուզում յենվել կառավարութիւնը. աջակողմեանները սակաւաթիւ են, լեհական կօլօն եթէ նոյնիսկ ձեռք մեկնէ կառավարութեան, նա այդ կանէ միայն տնտեսական քաղաքականութեան հարցերում, իսկ միւս հարցերում նա կը գնայ անբաժան օպպօզիցիայի հետ. հետևապէս այդ խմբակի վրա էլ չէ կարող յենվել։ Ծայրայեղ ձախակողմեանների մէջ նա չէ կարող պառակտում առեղծել, մնում է միայն կարծել, որ կառավարութեան ամբողջ ծրագիրն է՝ բորբոքել ձախակողմեան կուսակցութիւններից չափաւորները, այսինքն կադետների և ծայրայեղների, այն է սօցիալիստների մէջ գոյութիւն ունեցող անտագօնիզմը։ Սակայն դա անհնարին է համարվում։ «Парусъ» օրաթերթը այդ առիթով ասում է.

Ինչպիսի կատաղի պօլեմիկայով էլ չը գոռաւորէին իրանց փոխադարձ վերաբերմունքը չափաւորներն ու ծայրայեղները (կադետներն ու սօցիալիստները), նրանք այնուամենայնիւ կանգնած կը լինեն ռէակցիայի դէմ իբրև կողք-կողքի։

Նրանք միահամուռ կերպով կը վերացնեն արտակարգ օրէնքներն ու զինուորական-դաշտային դատարանները, միաբան կերպով կը մերժեն հաստատել բիւջէտը, չէին կը համարեն 87-րդ յօդ. հիման վրա մտցնվելիք ամբողջ օրէնսդրութիւնը, կը պահանջեն պարլամենտի դատաստանին ենթարկել Դուրնօվին և նրա համար պատասխանատու Ստօլիպինին։ Դրական օրէնսդրական ստեղծագործութեան մէջ իրար հետ հակառակ և պարլամենտական ու արտապարլամենտական տակտիկայի հարցերում իրարից տարբեր կերպով մտածող քաղաքական մտքի այդ երկու ուղղութիւնները բաւականաչափ ընդհանուր հիմունքներ ունեն մերձենալու, անհնարին դարձնելու ռէակցիօն մինիստրութեան գոյութիւնը օպպօզիցիօն մեծամասնութեան հետ միասին։

Այդ հետևանքին հասնելու համար հարկաւոր չեն ոչ յեղափոխական գործողութիւններ, ոչ էկսցեսսներ Դումայի կողմից դէպի մինիստրութիւնը։ Դրա համար բաւական է, որ Դուման իրագործէ իր սահմանադրական օրէնսդրական իրաւունքները։ Եւ նա այդ կը կատարէ։

*

Չը նայելով ընտրութիւնների արդիւնքը օպպօզիցիայի յաղթանակն է այնուամենայնիւ Պետական Դումայի դրութիւնը մնում է դեռ մութ, անորոշ. աջակողմեանները բաւականաչափ խոշոր վտանգ են հանդիսանում։ Այդ պատճառով օպպօզիցիայի առաջնակարգ գործերից մէկը աջակողմեանների դէմ կռիւը պէտք է լինի։ Բայց այդ կռւի աջողութիւնը կախված է լիովին օպպօզիցիայի համերաշխ գործունէութիւնից։ Ձախակողմեան բլօկ կազմելու հարցը նորից է հերթական անհրաժեշտութիւն դառնում։ Լրագրական տեղեկութիւններից երևում է, որ արդէն փորձեր են լինում այդ նպատակով պարլամենտական ձախակողմեանների մէջ։ Սակայն «Новь» լրագիրը չէ հաւատում, որ աջողվի «ձախակողմեան բլօկ» կազմել։

Աւելի շուտ հաւանական է, որ նրանից կանջատվեն ձախակողմեան անկուսակցականները և ապա կը կազմվի օպպօզիցիայի երեք խոշոր խմբակներ, բացի ժողովրդական ազատութեան կուսակցութիւնից,— սօցիալ-դեմօկրատներ, սօցիալ-յեղափոխականներ և «աշխատաւորներ»։ Նրանց թւական քանակից և պարագլուխների տաղանդաւոր լինելուց է կախված շատ բան մերձաւոր ապագայում։ Հէնց այժմ բանակցութիւններ են տեղի ունենում այդպիսի օպպօզիցիայի կազմակերպութեան մասին։ Մենք հաւատացած ենք, որ ներկայ պատմական մօմենտի պատասխանատւութիւնը այնքան զօրեղ կը լինի, որ կարող է զսպել մեծամասնականների միտինգային սովորութիւնները։ Մենք յոյս ունենք, որ մօտ օրերս կը ստեղծվի օպպօզիցիայի այնպիսի կազմակերպութիւն ժողովրդական ազատութիւնից առանձին, որը հնարաւոր կը դարձնէ պարլամենտական աշխատանքը։ Այն ժամանակ միայն մի փոքր կը պարզվի դրութիւնը և կարելի կը լինի քննութեան նիւթ դարձնել ապագայ տակտիկայի խնդիրը։ Բայց հէնց այժմից էլ մի բան շատ պարզ է, որ պարլամենտական աշխատանքը պէտք է լինի շարունակութիւն և իրականացումն առաջին Դումայի գործունէութեան, այսինքն պէտք է համապատասխանէ ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագրի ռէալ իրագործմանը։ Ռուսաստանի համար պարլամենտական ուրիշ աշխատանք ներկայումս չը կայ։

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴՆԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ՋՈՒԴՆՈՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ՆԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բգի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.։
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., մեզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բգի և ականջի, երկ. րեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱԶԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.։
Բժ. Ն. Ի. ՆԷՍՈՒՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՈՎԻԿՕՎ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ, Բժ. Կ. Ի. ՋՈՒԴՆՈՎՍԿԻ — Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեքտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԳԵՑԿԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԵՄ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.
Բժ. Կ. Գ. ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։
Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. 4—5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 72—144

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀԱՄԱՐՆԵՐ „ՎԻԿՏՈՐԻԱ“

Թիֆլիսի կենտրոնում, Դվորցօվայա փողոցի վրա, Փոխարքայի պալատի այգուն կից։ 40 համարները գեղեցիկ կերպով կահաւորված են և ունեն ամեն տեսակ յարմարութիւններ իջևանողների համար։

Օրական վարձը 60 կոպ. մինչև 4 ռուբլի. ամսական վարձողներին զիջում կը լինի։ Ծառաները վստահելի և քաղաքավարի են։

Ընտանիքով եկողներին արվում է խոհանոցը և լուացքի տեղը ձրի։ Ունի սեփական ճաշարան։

ՏԱՔ ԵՒ ՍԱՌԸ ՎԱՆՆԱՆԵՐ

Էլէքտրական լուսաւորութիւն։ Հեռախ. №1033

Համբարձում Եսայեանց

(Հ. Զ.) ա 5—10

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Պ. Զախարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՆԵՐՔԻՆ եւ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը առաւ. 10—12 ժ.

Տելեֆօն № 1087

Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.

(ա. օ.) 102—150

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, փետրվարի 22-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը Մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ կը տայ

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի յիշատակ հանգուցեալ Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ բեմական XXV-ամեայ բեղմնաւոր գործունէութեան

I ԱՐԻՒՆԻ ՈՒԽՏԱՐԱՆԸ — Պատմական անցք 1 արար., Լուագօնի, Թարգ. Տ. Զալէնի

II ՍԱԼՕՄԷ — Դրամա 1 արար., Ուայլդի, Թարգ. Նիկանի

III ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ որի միջոցին կը արվեն կենդանի պատկերներ հանգուցեալ դերասան Գ. Պետրոսեանի կատարած գլխաւոր դերերից։

Սկիզբը ժամը ճիշդ 8-ին են

Տեղերի գները բենեֆիսային է

Վարչութեան հերթապահ անդամ՝ Մ. Մուրադեան

Ռեժիսսեօր Յ. Աբէլեան

առ. 2—3

„ԽԱԲԱՐԴԱՐ“

Լոյս կը տեսնէ ուրբաթ, փետրվարի 23-ին, ժամը 12-ին։

Կարելի է ստանալ «ՀԱՅԵԼԻԻ» խմբագրատանը։

(Հ. Ն.) ա. 1—2

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ քթի, կոկորդի եւ ականջի հիւանդութիւնների

Ընդունում է ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի երկ. 5—7 ժ. ցի ուրբաթ։

Միխայլօվսկի պրօսպ., տ. Ֆօրբերի № 11.

(Կ. Հ.) առ. 26—60

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Խախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ սեռի եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն առաւօտ. 10—12 ժ., երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը։

առ. (Հ.ու.Հ.) 42—100

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։

Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33։

(ա. օ.) առ. 3—100

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՉԵՉ (искуственная вощина)

Պատրաստում եմ ձեռնտու գնով, փետրվար և մարտ ամիսներում

Հասցէս Сел. Бол. Караклисъ Аветису Агабабянцъ։

առ. օր. մ. 14—15

*

Արտասահմանեան մամուլը զբաղված է Պետական Դումայի ընտրութիւնների հետևանքով։ Չը նայելով այն ստատիստիքական տեղեկութիւնները, որոնց վրա նրանք հիմնուած են իրանց դատողութիւնները, այնքան էլ չեն համապատասխանում իրականութեանը, որովհետև պակաս են ցոյց տալիս օպպօզիցիայի ոյժերը, այնուամենայնիւ արտասահմանեան մամուլը շատ ճիշտ է գնահատում ընտրողական պայքարի արդիւնքը՝ կատարեալ պարտութիւն համարելով կառավարութեան համար։ Գերմանական յայտնի «Ֆրանկֆուրտեր Ցէյտունգ» լրագիրը գրում է.

Կարելի է ասել, որ առաջին Դումայի ընտրութիւնները բողոք էին՝ ուղղված ինքնակալութեան դէմ, իսկ ներկայինը՝ բողոք ներկայ կառավարութեան դէմ... Պետերբուրգի իշխանաւորները չեն կարող չը հասկանալ ընտրութիւնների այդ նշանակութիւնը, և նրանք պէտք է ընտրեն մաքուր սահմանադրականութիւնը կամ յեղափոխական շարժման բորբոքվելը, որ կարող է տեղի ունենալ նոր Դումայի արձակումից անմիջապէս յետոյ։ Դրակոնեան միջոցները ոչ թէ խաղաղացրին երկիրը, այլ աւելի սաստկացրին ընդհանուր զայրոյթը։ Նոյն իսկ դիկտատորը չէր կարող հնարել աւելի խիստ միջոցներ, քան այդ աշեց Ստոլիպինի մինիստրութիւնը. այդ պատճառով կասկած չը կայ, որ այդ շաւղի վրա բիւրոկրատիան ոչ մի աջողութիւն չի ունենայ...

Զափազանց ուշագրաւ է Ժօրէսի l'Humanité լրագրի խորհրդածութիւնները այդ մասին։ Ուրախութիւն յայտնելով սօցիալիստական կուսակցութիւնների աջողութեան համար, լրագիրը միևնոյն ժամանակ գրում է.

Հարկաւոր է ցանկալ, որ այս անգամ էլ Դումայում մեծամասնութիւն կազմէին սահմանադիր-ռամկավարները։ Միայն թէ նրանք զգուշանան դէպի աջ թեքվելուց։ Այդ հրամայողաբար պահանջում է նրանցից թէ իրանց սեփական շահը և թէ ամբողջ ռուս ժողովրդի շահը։

*

Փետրվարի 10-ին լոյս է տեսել «Նոր Աշխատանք» շաբաթաթերթի առաջին համարը։ Թերթը, ինչպէս երևում է առաջնորդողից, նպատակ ընտրելով ծառայել «հայ աշխատաւոր, ճնշված, թշուառ ժողովրդի» շահերին հրաւէր է կարդում ժողովրդի իսկական բարեկամներին գործել իր հետ միասին, ձեռք ձեռքի տուած, յանուն երկրի բարօրութեան։

Թող գան, միանան մեզ հետ ժողովրդի իսկական բարեկամները, գան միասին գործելու յանուն մեր երկրի բարգաւաճութեան և նրա ճնշված ազգաբնակութեան իրաւական, քաղաքացիական և տնտեսական դրութեան հիմնական վերափոխութեան։

Ներշնչված խօսքի և մամուլի մօտալուտ իրական ազատութեան հաւատով, իր այդ յօյսերով ու ծրագրով, թերթը սկսում է իր ծանր գործը—ժողովրդի ցաւերի ուսումնասիրութիւնը, որոնց վրա հիմնական սպեղանի դնելու համար խոստանում է իր անկեղծ առաջարկները։

Առաջին քայլափոխում թերթը իր ուշադրութիւնն է դարձնում աշխատաւոր ժողովրդի խոշոր մասի—երկրագործ ազգաբնակութեան ծանր կացութեան վրա և հետևեալ իրաւացի խորհրդածութիւններն է անում.

Ոչ մի ասպարիզում, ոչ մի գործում մեզանում նկատված չի այնպիսի յետամնացութիւն, անօգնականութիւն և անտարբերութիւն, որպէս երկրագործ ազգաբնակութեանը վերաբերմամբ։

Այն ժամանակ, երբ քաղաքներում ընդհուպ մի կողմ՝ մասնաւոր անհատների ձեռներէցութեան և աստ՝ այս կամ այն մասնագէտների համախմբութեան քաղաքացի ազգաբնակութեան համար գոյութիւն ունեն մատչելի և երբեմն էլ ձրի կերպով բուժող հիւանդանոցներ, բժշկական, իրաւական, տեխնիկական, մանկավարժական օգնութիւն, խորհրդատու մարմիններ, իսկ բանւորների և արհեստաւորների մէջ կազմակերպվում և իրագէս գործում են արհեստակցական միութիւնները, մեր երկրի երկրագործ գիւղացի ազգաբնակութիւնը, բառիս ամենայն մտքով, թողնված է բաղդի և հասարակական-վաստակար պայմանների կամքին։

Չը կայ ողջ Անդրկովկասում մի հեղինակաւոր հաստատութիւն, որին դիմել կարողանար գիւղացին իրեն հետ պատահած կամ իրենց հարկաւոր այս կամ այն կարիքով, երբեմն չափազանց կարևոր մի գործի մասին խորհուրդ ստանալու, ցուցմունքներ ընդունելու։

Գիւղացին՝ մեզ ապրեցնողն ու կերակրողը չունի ոչ մի անկեղծ. սրտացաւ բարեկամ, որի առաջ կարողանար բացել իր սիրտը, որից կարողանար այս կամ այն օգնութիւնը ստանալ, չենք ասում ձրի, այլ նոյն իսկ չափաւոր վարձատրութեամբ։

Ժողովրդի այդ ծանր դրութեան պատճառներից մէկն այն է, որ այնպիսի օգտաւէտ ու հոգատար հաստատութիւն, ինչպիսին է զեմստվօն, որ 20-30 տարի շարունակ գործում է ռուս ժողովրդի մէջ, որը համախմբելով իր շուրջը երկրի լաւագոյն ոյժերը՝ նրանց միջոցով անմիջական օգնութիւն է ցոյց տալիս ժողովրդին, մեզանում չը կայ։

Ծայրերկրները, իսկ դրանց մէջ և Անդրկովկասը,—ասում է թերթը,—զուրկ մընաց այդ հաստատութիւններից և ահա այսօր մեր գիւղն ու գիւղացիութիւնը թէ մեզ համար և թէ պետութեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անյայտ երկիր. ուր ապրում է նոյն հայվան գիւղացին՝ կարօտ մտրակի մատնված սովի և մահացութեան։

Չը կայ ոչ մի օգնութիւն. չը կան խըմբակցութիւններ, որոնք մօտենային գիւղին, ուսումնասիրէին նրան և իրական օգնութիւն հասցնէին անտէր, սոված, արգէտ մեր գիւղացիութեանը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ այսօր Պետական Դումայի շինութեան մէջ սկսել են հեռախօսի թելեր անցկացնել։ Աշխատում են թէ ներսում և թէ դրսում։ Դումայի շինութիւնը յարմարեցնում են տաքցնելու համար. հարիւրաւոր ձեռքեր աշխատում են արագութեամբ կարգի բերելու ներսը և դուրսը։ Դէպի Դումայի շինութիւնը տանող փողոցները հաւասարեցնում են և մաքրում։ Հսկող ոստիկանների թիւը շատացրել են։ Մինիստրների խորհրդի նախագահի կարգադրութեամբ համ. ձայն Տաւրիկեան պալատի մօտ գտնվող մինիստրական պաւիլիոնի համար կը բերվեն այն բոլոր տեսչութիւնների հրատարակութիւնները, որոնք կարող են օգտաւէտ լինել իբրև տեղեկատու գրքեր Պետական Դումային քննութեան առաջարկված հարցերի վերաբերմամբ։ Փետրվարի 10-ին ստորին ծառայողների ընդունելութիւնը Տաւրիկեան պալատի համար վերջացված է։

Անցեալ տարվայ համեմատութեամբ ծառայողների թիւը այս տարի շատ աւելի է։ Բոլոր նոր ընդունված ծառայողների մասին ոստիկանական բաժանմունքի միջոցով մանրամասն տեղեկութիւն են հաւաքել, յետոյ միայն ընդունել։ Պալատական պահպանութիւնը սկսված է փետրվարի 15-ից։

—«Сегодня» լրագիրը հաղորդում է, որ Պետական Դումայի դիւանատանը աշխատելու համար նոր նշանակված պաշտօնեաները ժողովներ են գումարում և քննում իրանց ապագայի հարցը այն դէպքում, եթէ Դուման շուտով արձակվելու լինենի։

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի կենտրոնական կոմիտեն ցանկալի է համարել Պետական Դումայի նախագահ ընտրել Մոսկվայի նահանգից ընտրված պատգամաւոր Փ. Ա. Գոլովինին, որ Մոսկվայի նահանգական զեմստվոյի վարչութեան նախագահն է։ Միւս թեկնածուն, որի ձայնը պակաս չէ կարող լինել, համարվում է Վ. Դ. Կուզմին-Կարավաևը։ («Русь»)

—Գիւղացիական դաշնակցութիւնը ներկայումս Պետական Դումայում ունի 10 անդամ և յոյս ունի անկախ միւս կուսակցութիւններից մի ինքնուրոյն ֆրակցիա կազմակերպելու։ Ինչ նուրոյն սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան ֆրակցիա ունենալու մասին կուսակցութեան կազմակերպութիւնների մեծամասնութիւնը անհրաժեշտ է համարում ունենալ Դումայում մի այնպիսի ֆրակցիա, որը առաջնորդվէր կուսակցութեան դիրեկտիվներով և գործէր համերաշխ կենտրոնական կոմիտեի հետ։ («Русь»)

—Անցեալ տարի Պետական Դումայի անդամների վաղ Պետերբուրգ գալը կառավարութեանը աւելորդ նեղութիւն պատճառեց Պետական Դումայի բացումից առաջ բարձր տրամադրութիւն ստեղծելով։ Բացի դրանից վաղ հաւաքվելու շնորհիւ պատգամաւորները կարողացան իրար հետ ծանօթանալ, նոյնիսկ կազմակերպվել, ինչպէս որ աշխատաւոր խմբակը կազմվեց։ Այս տարի կառավարութիւնը համապատասխան միջոցներ է ձեռք առել։ Անցեալ տարի հէնց որ պատգամաւորը ընտրվում էր իսկոյն վկայական էր ստանում նահանգապետից, որի հիման վրա նա Պետական Դումայի դիւանատնից ստանում էր պատգամաւորական մշտական տոմսակ։ Այս տարի, չը նայելով ընտրութիւններից մի քանի օր է անցել, պատգամաւորների մեծ մասը դեռևս վկայական չէ ստացել։ «Русь» լրագիրը իր կողմից նկատում է, որ վկայական չը ստանալը չէ կարող արգելք լինել նրանց Պետերբուրգ գալուն, որովհետև վկայականները կարող են ուղարկվել պօստով։

—Համապատասխան վարչութիւնների կողմից նորերս թոյլտւութիւն է ստացվել Պետական Դումայի ծախքերը հոգալու, նոյնպէս և պատգամաւորների ռոճիկը վճարելու համար բաց թողնել 500 հազար ռուբլի։ Ինչ վերաբերում է պատգամաւորների ճանապարհածախսին, որ առաջարկված է վճարել պետական գանձարանի միջոցներից, այդ գումարները հասնում են մօտաւորապէս 50,000 ռուբլու. այդ գումարի համար էլ յատուկ կարգադրութիւն կը լինի։ («Р. В.»)

—Փետրվարի 12-ին Պետական Դումայի շինութիւնը զննելու նպատակով այցելել են ոստիկանական դեպարտամենտի դիրեկտոր Տրուսեվիչը, փոխ-դիրեկտորներ Զույէվ և Զուբովսկին, ժանդարմների կորպուսի կառավարիչ գեներալ Սավիչը, դատաստանական պալատի դատախազ Կամիշանսկին և ոստիկանական դեպարտամենտի մի քանի ծառայողներ։ Շինութեան քննութիւնը տևել է բաւականին երկար։ («Бирж. Вѣд.»)

—Փետրվարի 13-ին և 14-ին կայացել է աւտօնոմիստների դաշնակցութեան կենտրոնական կոմիտեի խորհրդակցութիւնը պրոֆեսոր Լուչիցկու նախագահութեամբ։ Այդ խորհրդակցութեանը կոմիտեից բացի մասնակցում են լեհական (ոչ կոլոյի), հրէական լատիշական և մուսուլմանական խմբակների պատգամաւորները։ Առաջին հերթում դրված է դաշնակցութեան պարլամենտական ֆրակցիայի կազմակերպութեան և նպատակների մասին։ («Телеграфъ»)

—Պետերբուրգ հաւաքված գիւղացիական նախկին անդամները անհրաժեշտ համարելով միաբան գործելու, որոշել են կազմել գիւղացիական աշխատաւոր խմբակ։ Այդ խմբակի ծրագիրը և պլատֆորման դեռ ևս խիստ ձևակերպութիւն չէ ստացել, բայց իր գործունէութեամբ Դումայում թէ Դումայից դուրս ղեկավարվելու է գիւղացիական դաշնակցութեան գաղափարներով։

—Ծայրայեղ ձախակողմեան կուսակցութիւնների ներկայացուցիչների մէջ կայացած համաձայնութեան հիման վրա մտադրութիւն կայ կազմելու մի տեղեկատու (ինֆօրմացիօն) բիւրօ, որը պէտք է շաղկապէ սօց. յեղ., սօց.-դեմ., ժողովրդական սօցիալիստների և աշխատաւորների պարլամենտական ֆրակցիաների գործողութիւնները Պետական Դումայում։ Այդ կուսակցութիւններից և ոչ մէկը չէ կարող Դումայում առաջարկել որևէ նախագիծ առանց նախապէս բիւրօի հաւանութիւնը ստանալու, բայց ուրիշ որևէ համաձայնութիւն կայացնել աշխատաւորներն ու ժողովրդական սօցիալիստները հրաժարվել են և կը գործեն միասին՝ սօց.-դեմօկրատներից ու սօց.-յեղափոխականներից անկախ։ Աշխատաւորները աւելի մանրամասն կերպով մշակում են իրանց ծրագիրը առաջիկայ համագումարում պարլամենտական ֆրակցիայի համար։ («Нов. Вр.»)

—Աշխատաւոր խմբակը իր միջից ընտրել է կազմակերպիչ բիւրօ, որը ձգտելու է միացնել գաւառներից եկող Պետական Դումայի պատգամաւորներին։ Առաջին հանդիպումը և փոխադարձ ծանօթութիւնը կայանալու է աշխատաւորական Կարաւաևի մօտ, որ ընտրված է Եկատերինոսլավից։ Պետերբուրգի նահանգի գիւղացիներից ընտրված պատգամաւոր Լէզէչնինը նոյնպէս հասել է Պետերբուրգ։ («Телеграфъ»)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեն իր փետրվարի 15-ի նիստում զբաղվել է կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի համար նիւթեր հաւաքելու և դասաւորելու հարցի քննութեամբ։

Միևնոյն ժամանակ որոշել է Պետերբուրգում հրատարակել մի հանրամատչելի օրաթերթ «Народная Свобода» (Դումայի թերթիկ) վերնագրով, որը պէտք է փոխարինէ Մոսկվայում հրատարակվող «Народный Путь» լրագրին։

Ագրարական մասնաժողովում կարգադրված զեկուցումները մօտ օրերս կը տպագրվեն և կը յանձնվեն վաճառելու համար։

—Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան կենտրոնական կոմիտեն առաջարկութիւն է ստացել հարաւային մասի բանտերից մէկի կալանաւորներից, որպէսզի Պետական Դումայի բացման օրը քաղաքական կալանաւորները համառուսական քաղցադուլ յայտարարեն կառավարութեան վրա ազդեցութիւն գործելու նպատակով։ Այդ առաջարկութիւնը կենտրոնական կոմիտեի կողմից հաւանութիւն չէ ստացել այն պատճառով, որ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, կառավարութեան վրա ազդեցութիւն չէ գործում նոյնիսկ միլիոնաւոր գիւղացիների սովամահ վիճակը։

—Ուկրայնայի սօցիալ-դեմօկրատական «Սպիլկա» կուսակցութիւնը ցանկութիւն է յայտնել մտնելու ընդհանուր սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մէջ ազգային աւտօնօմիայի հիմունքներով, այսինքն, նա հրաժարվում է իր «Սպիլկա» անունից, ընդունում է կուսակցութեան կանոնադրութիւնն ու ծրագիրը, պահում է իրան միջազգային համագումարում առանձին ներկայացուցիչ ունենալու իրաւունք և Ուկրայնայի աւտօնօմիայի հարցում մնում է ազատ։

Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան կենտրոնական կոմիտեն այդ պայմանները մերժել է և առաջարկել «Սպիլկային» ընդհանուր հիման վրա մտնել կուսակցութեան մէջ։

—«Մեծամասնականների» և «փոքրամասնականների» յարաբերութիւնները ներկայումս աւելի ու աւելի են լարվում։ Պետերբուրգի սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մեծամասնականների կոնֆերենցիայում ընդունված է հետևեալ բանաձևը. 1) փոքրամասնական կոչված խմբակի վրա է ընկնում ամբողջապէս Պետերբուրգի սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան պառակտման մեղքը ընտրութիւնների ժամանակ. 2) փոքրամասնականների խմբակի բանակցութիւնները կադետների հետ պառակտումից առաջ և յետոյ իսկապէս անթոյլատրելի առևտուր էր Դումայի տեղերի համար, մի աճրդավաճառ, որ տեղի ունէր Պետերբուրգի սօցիալ-դեմօկրատական պրոլետարիատի կամքի հակառակ. 3) մանաւանդ անթոյլատրելի է հանդիսանում Դանի գործունէութեան եղանակը, որ ակտիվ դեր է խաղացել ամբողջ պառակտման և կադետների հետ բանակցութիւն վարելու գործում։ Այդ բանակցութիւնները վարելու համար նա ամենևին լիազօրութիւն չէ ստացած եղել կուսակցական կազմակերպութիւններից և ոչ մէկից. 4) փոքրամասնականների վարմունքը կադետների հետ բանակցութիւնները խզելուց յետոյ, մանաւանդ Պետերբուրգի ձախակողմեան կուսակցութիւնների մէջ համաձայնութիւն կայանալուց յետոյ, նրանց դեմօնստրատիվ բողոքը այդ համաձայնութեան դէմ և նրանց կոչը ընտրողներին, որով առաջարկվում էր Պետերբուրգի մի շարք մասերում աջակցութիւն ցոյց չը տալ այդ համաձայնութեանը, նոյնպէս և ձախակողմեանների թեկնածուների անուանացուցակը կազմելիս ցոյց տուած օբստրուկցիան և այլն։ Այդ բոլորը ուղղակի հարուած է պրոլետարական և ընդհանուր կուսակցութեան գործի համար յօգուտ կադետների կուսակցութեան։ Այդ պատճառով ժողովը ցանկութիւն է յայտնում, որպէսզի փոքրամասնականների հեռանալուց յետոյ Պետերբուրգի սօցիալ-դեմօկրատական կոնֆերենցիայի մեծամասնական մասը մասնակցէ կենտրոնական կոմիտեի նախաձեռնութեամբ կայացվող կուսակցական դատավարութեանը և վճիռ կայացնէ փոքրամասնական խմբակի և ընկեր Դանի քաղաքականապէս անթոյլատրելի վարմունքի համար։ Ժողովը առաջարկում է հակառակ այն պայքարի, որ սկսել է կենտրոնական կոմիտեն Լենինի դէմ, անմիջապէս տեղեկացնել ի գիտութիւն Պետերբուրգում սօցիալ-դեմօկրատիայի կատարած ընտրողական պայքարի ամբողջ ընթացքի և փոքրամասնականների կատարած դերի մասին։ («Телеграфъ»)

ՌՈՒՄԲԸ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳԾԻ ՎՐԱ

Հեռագիրները սրանից մի քանի օր առաջ հաղորդեցին կայսերական երկաթուղային գծի վրա ռումբ գտնվելու մասին։ Մայրաքաղաքի լրագիրները այժմ հաղորդում են մանրամասնութիւնները։

«Бирж. Вѣд.» հաղորդում է, որ այդ դէպքը մեծ իրարանցում է առաջացրել և ոտքի հանել յայտնի և գաղտնի ոստիկանութիւնները։ Ինչպէս պարզվում է, անյայտ չարագործը հագած է եղել այնպիսի զինւորական համազգեստ, որպիսին առհասարակ հագնում են գնացքներին ուղեկցող I երկաթուղային բատալիոնի մեքենավարները։ Չարագործը չափազանց երիտասարդ մարդ է եղել, նուրբ դիմագծերով, երեր, խնամքով։ Ռումբը դրված է եղել առաջին և երկրորդ գծերի միջև կայսերական պաւիլիոնից 8-ը սաժէն հեռու։ Անծանօթը ժամանակ չէ ունեցել ռումբը գծի վրա դնելու։ Երբ փորձել են նրան կալանաւորելու, անծանօթը զինադրութիւն է ցոյց տուել։ Երկու անգամ նա կրակ է բացել Միխայլովսկու վրա, բայց չարագործը ատրճանակը նրա դէմ ուղղելով դուրս է պրծել Միխայլովսկու ձեռքից ու փախել։ Ռումբի պայթումը պէտք է տեղի ունենար վագոնի և կայարանի ընդհարումից։ Եքսպերտների ասելով պայթման ոյժը սարսափելի զօրեղ կը լինէր և գնացքից ու կայսերական պաւիլիոնից ոչինչ չէր մնայ։ Ամեն կողմեր հեռագիրներ են ուղարկված պահանջելով կալանաւորել չարագործին, որի դէմքը մանրամասն նկարագրել են։ Դէպքի մասին հաղորդել են 4-րդ մասի դատաստանական քննիչին և դատախազին։ Գնացքը մի փոքր ուշանալուց յետոյ շարունակել է ճանապարհը։ Մեծ իշխանին զեկուցել են եղելութեան մասին։ Այսօր բարձրաստիճան անձանց Ցարսկոյէ-Սելօ գնալը չի լինելու։ Գծի պահպանութեան համար արտակարգ միջոցներ են ձեռք առնված։ Ենթադրութիւն կայ, որ չարագործը տանու մարդ է եղել, որովհետև նրան լաւ յայտնի են եղել կայարանի կարգերն ու գիրքերը։ Լուր է տարածվել, որ գտել են չարագործի հետքը. կասկած կայ նախկին ծառայողներից մէկի վրա։

Այդ առիթով «Нов. Вр.» հետևեալ լրացուցիչ տեղեկութիւնն է յայտնում։ Երբ դէպքի մասին յայտնում են ժանդարմերիական բաժանմունքի կառավարչին և ադմինիստրատիվ բարձր իշխանութիւններին, իսկոյն գալիս է պօլկովնիկ Կոմիսարօվը և սկսում է քննութիւն կատարել և ռումբը դատարկել։ Ռումբը դրված է եղել արկղի մէջ։ Արկղի երկարութիւնը եղել է 4 և կէս վերշոկ, երկու ապակեայ խողովակներով, իւրաքանչիւրը 3-ական վերշոկ երկարութեամբ. ներսում եղել է 3 և կէս ֆունտ պայթուցիկ սնդիկ։ Իսկոյն խուզարկել են կասկածելի անձանց, պաւիլիոնի և գծի բոլոր բնակարանները։

ԲՐԴԵՈՒԹ ԱՅԴՊԻ՞Ս ՉԷ

I

Մեր դժբաղդ ճեմարանի խնդիրը երկու շաբաթից աւելի է, որ դրված է հասարակական դատաստանի առաջ։ Մամուլը ընդարձակ սիւնակներ է նուիրում կատարված փաստի լուսաբանութեան համար և միայն «կեղեքվածների պաշտպան» «Ժամանակն» էր, որ դաքարէական պապանձումն էր պահպանում։

Բայց այսօր նա էլ է խօսում—և ինչպիսի շանթահար լեզուով.

—«Այդպիսի սերունդ հարկաւոր չէ մեզ», —Պառնասի կատարից բացագանչում է Զեվս և շանթերը ուղղում այն թոթովախօս մանուկներին, որոնք «սուինների անհող սպառնալիքը թողնելուց յետոյ» հարկադրված էին իրանց բողոքը ամփոփել «բէգոլիւցիայի» մէջ։

Սակայն ինչու է այդպէս զայրացել Զեվսը, այդ «անհարկու խեցեվճռի» արձակող «նորընծաների» վրա։

Որովհետև նրանք քննադատում են աւտօրիտետներին, որովհետև «նրանք պատրաստ են ամեն բան հեգնել, թեկուզ նրանք լինեն անվիճելի աւտօրիտետներ»։

Դա, ի հարկէ, ցաւալի իրողութիւն է։ Բայց մեղաւորը աշակերտութիւնը չէ, որ արտադրում է աւտօրիտետ չը ճանաչող տիպեր։ Եւ մէթէ այդպիսի տիպեր մշակողը միայն հայկական սօցիալ-դեմօկրատիան է։ Շրջահայեաց եղէք, պարոններ, հայկական Դաշնակցութիւնը լաւ շաւղով է ընթացել կամ ընթանում հէնց ներկայումս։

Ուշ, շատ ուշ էք նկատում վտանգը և այն էլ միայն այն ժամանակ, երբ հակառակորդն է անողը։

Ո՞ւր էիք, երբ անցեալ տարի բողոքներ եղան դաշնակցական դանազան ուսուցիչների թայֆայական ագիտացիայի դէմ, դպրոցներում խմբական սիստեմ մտցնելու դէմ, երբ տուժում էր այդ գործելակերպի շնորհիւ դպրոցը և այլասերվում՝ աշակերտները։ Վերջապէս հէնց այժմ ինչու չէք տեսնում թէ ինչպիսի մանկավարժական միջոցներ է գործադրվում ձեր քթի տակ, ինչպիսի թայֆայական հոգեբանութիւններ և հասկացողութիւններ են ներշնչվում ձեր մարզարաններում։

Եւ այդպիսի դրեսիրովկայի ենթարկված տղաները վաղը պէտք է ուսուցչական պաշտօնն՞ վարեն, սերունդ կրթեն։

Այդպիսի ուսուցիչները «չը լինէին աւելի լաւ էր քան լինէին»։ Որովհետև նրանք սերմանում են «յուզումներ», որոնք դպրոցի և հասարակական շահերի զարգացման տեսակէտից ոչ այլ ինչ են, եթէ ոչ անտեղի ու վտանգաւոր ցնցումներ։ Մէթէ առանց այդ ցնցումների, «յուզումների» անհնարին է բարեփոխութիւն մտցնել մեր դպրոցներում, եթէ լինէր լուրջ և գիտակցական վերաբերմունք վարչութեան կամ հասարակութեան կողմից։

II

Դպրոցը պրօպագանդայի ասպարէզ չը պէտք է լինի և նա պէտք է ծառայի միայն իր բուն նպատակներին։

Սակայն Միք. Յովհաննիսեանը այդ ճշմարտութիւնը ժխտում է. նա ընդունում է պրօպագանդը միայն թէ «որոշ սահմաններ ճանաչելով»։ Բայց նա մոռանում է, որ դրանով չարիքը ամենևին չէ վերացվում. չարիքը վերացնելու համար անհրաժեշտ է նրա արմատը ոչնչացնել։

Տարբեր մարդիկ և տարբեր կուսակցութիւններ միատեսակ չեն մտածում և ոչ էլ միատեսակ գործում. եթէ սօց.-դեմօկրատները մի կողմից դաշնակցականներն ու այլ կուսակցութիւնները միւս կողմից մուտք գործէին մեր դպրոցները և սկսէին գործել ճիշտ այնպէս, ինչպէս նրանց լիդերներն են գործում ժողովրդի մէջ, նոյն իսկ կրթված հասարակութեան մէջ, դպրոցը անխուսափելիօրէն փողոց պէտք է դառնար և ռամկաբար աղմկվէր։ Եւ մէթէ այդ փողոցային արտայայտութիւնները պէտք է վերագրել աշակերտական հոգւոյն, այլ ոչ «նորընծայ» ուսուցիչների գործելակերպին, պրօպագանդիստների դոկտրինէորութեան։

Բոլորովին չը պէտք է զարմանալ, եթէ «խակութեան ու փրաչեռութեան հետ այդպէս վաղաժամ զարգանում է պատանիների մէջ սանձարձակ յաւակնութիւնը և մեծամտութեան զզուելի մանիան»...

Կուսակցական, մանաւանդ թայֆայական պրօպագանդիստը գործելով մեր դպրոցներում, փոքրերի ու անչափահասների մէջ չէ կարող լաւ տիպեր մշակել։

Այդ պատճառով դպրոցը կուսակցական պայքարի ասպարէզ չը պէտք է դառնայ։ Դպրոցը պէտք է տայ աշակերտին գիտութիւն և ինքնաճանաչութիւն, պէտք է մշակէ նրա մէջ տոկուն կամք և աշխատանքի սէր, բայց, նա չէ կարող թելադրել ու տրամադրել ընդունելու իբրև աբսօլիւտ ճշմարտութիւն կուսակցական դօգմաները, որոնց անխախտականութիւնը դեռ ևս կասկածելի է, որոնք փոխւում են ժամանակի ու հանգամանքների ազդեցութեան տակ։

III

Եթէ այսօր վտանգված է առհասարակ մեր կրթական հաստատութիւնների կեանքը, ի միջի այլոց և ճեմարանի, այդ, ի հարկէ, այն կարճատես և թեթևամիտ հասկացողութիւնների արդիւնքն է, թէ՝ դպրոցում կարելի է պրօպագանդ անել։

Բոլորովին տարօրինակ է, որ Միք. Յովհաննիսեանի լօգիկայով, այդ տեսակ պրօպագանդի ծայրայեղութիւնները յիմարութիւն է լոկ անուանվում, այլ ոչ՝ յանցանք. իսկ տուած արդիւնքը՝ պրօպագանդի այլասերումն և ոչ մատաղ սերնդի այլասերումն։

Անուանեցէք, պարոններ, իւրաքանչիւր բան իր իսկական անունով և աշխատեցէք ուղղել դաստիարակչական այն սիստեմը, որ դուք էք պատուաստել մեր դպրոցներին և մաքրել այն արատները, որին ներկայումս ականատես ենք։

Ցաւալի է արդարև մեր դպրոցների ծանր վիճակը. յուզումները քրօնիկական են դարձել. բայց այդ ինչ բնոյթ յուզումներ են, որի վրա յեղափոխական եարլիկն է կախվում, և ո՞րտեղից են նրանք առաջացել։

Հայ հասարակութեան, մանաւանդ ինտելիգենցիայի պարտքն է հետաքրքրվել մեր դպրոցների ներկայ վիճակով։ Տխուր իրականութիւնը հրամայողաբար պահանջում է նրանից արտայայտել իր կամքն ու ցանկութիւնը. ուզում է որ դպրոցը դառնայ պրօպագանդայի ասպարէզ, դասակարգային պառակտում սերմանող, իսկ ուսուցիչը լինի կուսակցական, ապա ուրեմն և միակողմանի պրօպագանդիստ, թէ՞ դպրոցը պէտք է ծառայէ իր իսկական կոչմանը և հեռու մնայ պօլիտիկայից։

Խնդիրը հրատապ է և սպասում է պատասխանի։

Դժբաղդ աշակերտութիւնը ոչնչով մեղաւոր չէ, եթէ կուսակցական տգեղ, անխտրական ագիտացիան ուսուցիչ-պրօպագանդիստների միջոցով մուտք է գործել դպրոցի մէջ։ Այդ պատճառով նրա հասցէին ուղղված բացագանչութիւնը՝ «Այդպիսի սերունդ հարկաւոր չէ մեզ», անաչառութեան ոչ մի նշոյլ, ճշմարտութեան ոչ մի հիւլէ չէ պարունակում իր մէջ։

Այլ բան է, եթէ դա ուղղված լինէր պրօպագանդիստ-ուսուցիչների հասցէին։ Եթէ ասված լինէր թէ՝ «այդպիսի ուսուցիչներ հարկաւոր չեն մեզ»։

Այդ բացագանչութիւնը անկեղծ ծափահարութեամբ կընդունվէր հասարակութեան կողմից։

Աւտօրիտետների անկումը չէ, որ մեզ պէտք է ցաւ ու զայրոյթ պատճառէ, այլ դըպրոցների անկումը իբրև այդպիսին և մատաղ սերնդի այլասերումը։

Լ. Դանիէլեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Հէդդա Գաբլէր» Իբսէնի, դրամա 4 գործողութեամբ, թարգմանութիւն Ս. Եսայեանի։

Տիկին Սիրանոյշ իր բենեֆիսին, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, փետրվարի 19-ին, դրել էր Իբսէնի «Հէդդա Գաբլէր» դրաման։

Ներկայացումը գրաւել էր բազմաթիւ հանդիսականներ։ Թատրոնը լիքն էր։

Իբսէնի այդ պիեսը առաջին անգամ էր տրվում հայկական բեմի վրա։ Պիեսի հերոսուհին Հէդդա Գաբլէրը կամքի տէր, ուժեղ բնաւորութեամբ, կեանք սիրող մի կին է, որը սակայն մարդու է գնացել մի անձի, որ բոլորովին անհամապատասխան է նրան։ Ամուսինը, Եօրգէնը. բարի մարդ է, գիտութիւններով զբաղվող, բայց չէ ճանաչում իր կնոջ հոգին և չէ ըմբռնում նրան տոգորող յուզմունքները։ Հէդդան չէ սիրում իր ամուսնուն, բայց չէ կարող վերադարձնել և իր առաջին սէրը, որը նա զգացել է դէպի տաղանդաւոր, բայց փչացած Լեվբորգը։ Հէդդան խորտակված է տեսնում իր կեանքը, բայց նա յոյս ունի դեռ ապրելու. իսկ երբ նա նկատում է, որ նրա ազատ կամքի վրա ուզում է շղթայ դնել տան ծանօթ Բրակը, նա դիմում է ինքնասպանութեան։

Հէդդայի դերը կատարում էր տիկին Սիրանոյշ։ Շնորհալի դերասանուհին ուսումնասիրել էր հոգեբանական այն ելևէջները, որոնցով անցնում է Հէդդայի կարճատև ամուսնական կեանքը։ Նա տաղտկանում էր և զզվում այն միօրինակ աւանդական կենցաղավարութիւնից, որի մէջ ընկել էր նա և ընդգծում այն միայնակութիւնը, որին նա դատապարտված էր անպատեհ հանգամանքների շնորհիւ։ Դժբաղդաբար Սիրանոյշը խօսում էր ցածր ձայնով և նրա խօսուածքի մի նշանաւոր մասը մնաց անմատչելի հասարակութեան համար։ Այդ հանգամանքի շնորհիւ թուլացաւ և ընդհանուր տպաւորութիւնը։ Հասարակութիւնը ջերմ կերպով ողջունեց Սիրանոյշին և մատուցեց բազմաթիւ ընծաներ։

Եօրգէնի դերը կատարում էր Զարիֆեանը։ Նրա Եօրգէնը ընդհանրապէս հաւատարիմ էր այն տիպին, որ պէտք է ներկայացնէր. նա բարի էր, միամիտ, ընտանեսէր, կեանքի սահմանափակ հորիզոնով, նուիրված իր գիտնական պարապմունքներին. բայց Զարիֆեանի Եօրգէնը արդէն չափազանց խղճուկ բնաւորութիւն էր ներկայացված։ Ինչ և լինի Եօրգէնը, նա որոշ գործի լուրջ կերպով նուիրված մի մարդ է, նա սիրում է և յարգում գիտութիւնը, որի գաղափարով և ապրում է, և այդ հանգամանքը նրա անձին պէտք է տայ մի որոշ աստիճանի լրջութիւն ու պատկառելիութիւն։

Լեվբորգի դերը կատարում էր Աբէլեանը։ Նա ներկայացրեց Լեվբորգին իբրև աւելի շնորհալի, աւելի շարժուն, աւելի կենսունակ մի մարդու, բայց չը տուեց նրա բնաւորութեան երկչոտ, երերուն արտայայտութիւնը, որպիսին ըստ պիեսի նա պէտք է ունենար։

Տիկին Վարդունի, տիկին Արաքս և պ. Յարութիւնեան երկրորդական դերեր ունէին և նպաստեցին անսամբլին։

Ընդհանրապէս այդ երեկոյ բոլոր դերասանները ցածր ձայնով էին խօսում։ Հասարակութեան միջից անդադար լսվում էին աղերսանքներ՝ «բարձր, բարձր, ոչինչ չենք լսում» խօսքերով։ Ներկայ տողերիս գրողը, որ երրորդ կարգումն էր նստած, անկարող էր լինում շատ բան լսել բեմի վրա արտասանածներից, իսկ ինչ անեն հեռու նստածները։ Շնորհիւ ցածրաձայն արտասանութեան պիեսը շատերի համար մնաց չը հասկացված։

Միրօղ

ՔՍՏՄՆԵԼԻ ԱՐԱՐՔ

Երկուշաբթի երեկոյ, հայոց ներկայացման ժամանակ, երկրորդ միջարարում տեղի ունեցաւ մի վերին աստիճանի քստմնելի դէպք։

Դերասան Արաքսեան մօտենում է կորիդորում կանգնած «Աթաբալայի» խմբագիր Ա. Երիցեանին, զարկում է նրան մի ապտակ։

Այդ անում է դերասանը թատրոնում, որի գաղափարին ինքը ծառայում է, այն ժամանակ, երբ հասարակութիւնը հրաւիրված է ներկայացման, մի երեկոյ, երբ իր խմբի անդամներից մէկը՝ տիկին Սիրանոյշը կատարում է իր դերասանական տօնը, իր բենեֆիսը։ Նա բաւական է ցանկանում հաշիւներ տեսնել մարդկանց հետ։ Նա կոպիտ ոյժով է պատասխանում գրական խօսքին և այդ ձևով է լուծում վէճեր անձնական նկատողութիւնների համար։

Ոչ մի յարգանք դէպի թատրոնը, դէպի հասարակութիւնը, դէպի իր ընկերները, դէպի գրական խօսքի ազատութիւնը և դէպի դերասանի արժանաւորութիւնը։

Թատրոնում եղած հասարակութիւնը և մամուլի ու գրականութեան ներկայացուցիչները չափազանց վրդովված էին տեղի ունեցած վայրենութիւնից։ Բայց ի պատիւ գեղարուեստի տաճարի և թատրոնական խմբի՝ նրանք զսպեցին իրանց և դիմում արին դրամատիկական ընկերութեան վարչութեան բաւարարութիւն տալու կատարված վիրաւորանքի և խայտառակութեան համար։ Վարչութեան նախագահը խոստացաւ առանց յապաղելու հրաւիրել վարչական ժողով այդ առիթով։

Ի՞նչ կասէ վարչութիւնը, ինչ կասեն ընկեր դերասանները—այդ կը սպասենք ու կը տեսնենք։

Հայոց ներկայացումները առհասարակ շատ սիւրպրիզներ են հանդէս բերում թատրոն յաճախող հասարակութեան համար։ Մշտական աղմուկ, գնված տեղերի բռնի գրաւումն, անտեղի սրախօսութիւններ և ուրիշ անպատեհութիւններ սառեցնում են մարդկանց թատրոնի սրահից։ Մէթէ դերասանն էլ պէտք է գար իր կողմից հարստացնելու խայտառակութիւնների ցուցակը։ Մէթէ թատրոն եկող հասարակութիւնը ապահոված չը պէտք է լինի գոնէ անձնական վիրաւորանքներից և այն էլ դերասանի կողմից։ Մէթէ քննադատը ազատ չէ իր կարծիքների մէջ և պէտք է երկիւղ կրէ դանազան ֆիզիկական բռնութիւններից։

Էլ ո՞ւր մնաց թատրոնի պատիւը։

ԲԱԳՈՒԻ ԳԺՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Նամակ խմբագրութեան)

Փետրվարի 12-ին

Բագուն կատարեալ գժանոց է... 4—5 տարի առաջ, երբ Բագուի փողոցներում գիշեր ժամանակ մարդ հեռուից շուն էր տեսնում, գոռում, սարսափում էր. սակայն այժմ, երբ ցերեկով մարդ է տեսնում, մարդուն է սարսափում, աստուածային կերպարանք կրող մարդուց, իսկ շուն տեսնելիս ուրախանում է։

—

2—3 տարի առաջ քաղաքային վարչութիւնը առանձին սայլեր, մարդիկ էր վարձել փողոցներում շներ բռնելու, բանտարկելու, որպէսզի այս ու այն բակը չը մտնեն հաւ ու ձագ չը գողանան, և այդ շներին ջնջում և քաղաքից դուրս տեռրորի էին ենթարկում։

Սակայն ներկայումս «քաղաքային կառավարութիւնը» մարդիկ է նշանակել մարդիկ բռնելու, բանտարկելու, ապա և պօդվալներում տերրորի ենթարկելու։

—

2—3 տարի առաջ Բագուն ունէր մի գժանոց, բայց այժմ իւրաքանչիւր թաղում մի գժանոց կայ, սակայն էլի փողոցներում լիք գժեր են։

—

1—2 տարի առաջ Բագւում ազամիկներին երկրպագում էին, բայց այժմ դատապարտում, անիծում ու հայհոյում են, որովհետև գժերը խելոքացել են, խելօքները գժվել, իսկ գժանոցները բազմացել։

—

2—3 տարի առաջ մարդիկ Աստուածանից էին պատկառում, սարսափում և նրա անունով երդվում, բայց այժմ խուլիգանների, կօզակների ու լոտիների անունով են իրանց իւրաքանչիւր քայլը փոխում։

—

2—3 տարի առաջ մարդիկ իրանց և իրանց առօրեայ երջանկութեան, ապրուստի ապահով միջոցների ու իրանց որդկերանց կըրթութեան համար էին մտածում, իսկ ներկայումս իրանց առօրեայ կեանքի, կենդանութեան համար են հոգում, որպէսզի սաղ-սալամաթ իրանց տունը հասնեն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գորիս, 11 փետրվարի

Հայ-Թուրքական կատարածը վերջանալուց յետոյ, բնականաբար և վերջանում էր Դաշնակցութեան գործունէութիւնը գաւառներում, բայց արի ու տես, որ նրա հերոսները այժմ հող չունենալով գործելու, սկսել են շահագործել նպաստամատոյց Յանձնաժողովի բարեգործութիւնը. ահա ինչպէս։

Շուշուց վերադառնում էի Գորիս. պօստի ճանապարհը փչացած լինելու պատճառով ստիպված էի վարձել ձիեր ղարաղշլաղցիներից և նրանց հետ ճանապարհվեցինք դէպի Գորիս։ Ճանապարհին խօսակցութեան ժամանակ հետաքրքրվեցի նրանց առօրեայ կեանքով—թանգութեան, էժանութեան և հացի պակասութեան վերաբերեալ հարցերով, և տուի հարց, արդեօք ձեզ ևս ալիւր և ցորեն բաժանե՞լ են թէ ոչ. նրանք ասացին. «Աստուած պահէ Դաշնակցութիւնը. էլի էս սև օրերին նա է մեզ պահում, ալիւր և ցորեն է բաժանում մեզ և թէ միւս գիւղերին. եթէ նա չը լինէր, ինչ կը լինէր մեր դրութիւնը. սովից պէտք է կոտորվէր ամբողջ Զանգեզուրը»։ Ես միանգամայն զարմացայ և

հարց տուի, թէ արդեօք ո՞վ է ձեզ ասել, որ ալիւրը և ցորենը բաժանում է Դաշնակցութիւնը և ոչ Նպաստամատոյց Յանձնաժողովը: Նրանք պատասխանեցին. «Եղբայր, նրանց արածը ինչու էք ուզում կորցնել. ինչպէս թէ ով է ասել. նրանց մեծերը միշտ մեր մէջ են և ամեն կարգադրութիւն նրանք են անում»: Ես նրանց հասկացրի, որ Դաշնակցութիւնը ոչ ալիւր և ոչ ցորեն ունի, որ բաժանէ, այլ դա ուղարկում է Կովկասեան Նպաստամատոյց Յանձնաժողովը: Գիւղացիներից մէկը ասաց. «Եղբայր, ես դժուարանում եմ հաւատալ. Դաշնակցութիւնը նոյնիսկ հիմնել է ցորենի ամբար Զանգեզուրի մեծի անունով—Ս-եան ամբար—մեր Ղարադշլաղ գիւղում»:

Նոյն օրը հասանք Տեղ գիւղը, որտեղ և պէտք է գիշերէինք: Ես այստեղ ևս հետաքրքրվեցի նոյն հարցերով և հարց ու փորձ արի Տեղ գիւղացիներին և միացի ալպած. նրանք ևս նոյն խօսքերը կրկնեցին, ինչ որ ղարադշլաղցիները, աւելացնելով որ՝ «Սրանից մի քանի օր առաջ պ. Ս. այստեղ էր, ժողով արեց և հրամայեց, որ 40 ձի պատրաստենք և գնանք Շուշուց ցորեն և ալիւր բերենք»:

Ընթերցող, ասացէք խնդրեմ, մի՞թէ սա աչքակապութիւն չէ և մի՞թէ պ. պ. Դաշնակցութեան շէֆերը կարծում էին, որ իրանց կեղծիքները մի օր հրապարակ չը պիտի ընկնեն, նոյնիսկ մամուլի միջոցով:

Զանգեզուրի գիւղօրայքում այժմս մեծ պայքար են մղում միմեանց դէմ դաշնակցականները և հնչակեանները, ամեն մէկը աշխատում է իր ձեռքը գցել գիւղերը: Խեղճ ժողովուրդը դարձել է խաղալիք դրանց ձեռքին: Հայ թուրքական կռուածներից յետոյ, բնականաբար, ամեն տեղ տարածված էր Դաշնակցութեան անունը. շատ գիւղեր երկիւղի ազդեցութեան տակ ստիպված էին համակրանքով վերաբերվել դէպի նրանց, նոյնիսկ առերես: Վերջերս երևացել են այստեղ և հնչակեաններ, որոնք կարծես նախանձել են Դաշնակցութեան փառքին և իրանք ևս ցանկանում են նոյնպիսի փառքեր ձեռք բերել: Իրանք ևս ընկնում են գիւղերը և կարճ ժամանակամիջոցում կարողանում են համակրանք ձեռք բերել և Դաշնակցութեան կազմակերպված գիւղերից մի քանիսը անցնում են նրանց ձեռքը: Այդ տանել չեն կարողանում Դաշնակցութեան շէֆերը: Ինչպէս կարելի է Դաշնակցութեան հզօրագոյն գիւղերը անցնեն ինչ որ հնչակեանների ձեռքը. հարկաւոր է միջոցներ ձեռք առնել նրանց դէմ, թէ չէ Զանգեզուրը ձեռքից կը գնայ. և առնում են միջոցներ: Հրահանգ-հրաման է ուղարկվում հնչակեաններին, որ նրանք չը համարձակվեն Դաշնակցութեան պատկանող գիւղօրայքը մտնել: Հնչակեանները, որոնք այժմս այստեղ իրանց աւելի ուժեղ են զգում, ստանալով դրանց հրամանը, աւելի ևս բորբոքվում են և պատասխան են գրում նրանց նոյն բովանդակութեամբ և հրաւիրում նրանց մի որոշ գիւղ բացատրվելու: Որոշված օրը կանչված հնչակեանները գնում են ժամադիր եղած վայրը և սպասում են նրանց շրջիկներին և զինուորներին, բայց փոխանակ Դաշնակցութեան շրջիկների և զինուորների, գնում են մի հարիւրեակ և ձերբակալում մի քանիսներին:

Տեղիս ծխական ուսումնարանի ուսուցչական խմբի մէջ ևս երկպառակութիւններ են տիրում:

Ուսուցչական խումբը բոյկոտ է յայտարարել աւագ-ուսուցիչ Գ. Տ Մ.-ի դէմ որոշ պարտազանցութիւնների համար, որոնց մանրամասնութիւնները լոյս են տեսած «Մշակում», և աշխատում են ամեն կերպ հեռացնել նրան:

Ամեն օր լինում են երկար ու ձիգ ժողովներ, որոնցից դեռ այժմ ոչ մի հետևանքի չը հասնելով, Դաշնակցութիւնը վերջապէս ստիպված եղաւ միջամտելու. չէ՞ որ առանց նրան ոչ մի ազգային գործ լուծում չէ ստանում. և միջամտեց՝ արդարացնելով որոշ կէտերում աւագ-ուսուցչին, հակառակ Սաղանդարեանի և միւս ընկերների ջանքերին: (Ի նկատի պէտք է ունենալ այն հանգամանքը, որ Սաղանդարեանը «Մշակի» թղթակից է և ոչ իսկական դաշնակցական):

Ամսիս 8-ին մի հարիւրեակ կօզակներ և սալաթեանի գնդի զինուորներ շրջապատում են Խնձորեսկ և Տեղ գիւղերը և խիստ խուզարկութիւն. գտնվում են բաւականաչափ զէնքեր. ձերբակալվում են երեք հոգի:

Լօրիկ

—

Ուլիա-Նորաշէն, 16 փետրվարի: Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մեր գիւղը թալանվեց, մեծ դ... Շարուրի կառաւարի թուրք խուժանի ձեռքով. մեր ամենից վնասը կէս միլիոն է: Քանի անգամ դիմումներ ենք արել, խնդրել ենք կառավարութիւնից, բայց մեր խնդիրքը մնացել է ձայն բարբառոյ յանապատի: Կարօտ ենք ցամաք հացի, ապրում ենք խոնաւ, ... զուրկ ցուրտ տներում. 5—6 ընտանիք հիւանդ, առողջ, մի քրքրված վերմակի տակ են ապրում. ամեն տեսակ հիւանդութիւն մեր ձմեռի տներում կարելի է գտնել: Գիւղի աւերումից մինչև այժմ 220-ի չափ զոհեր ենք տուել սառը գերեզմանին: Երկու անգամից աւել բժիշկ չենք տեսել. Ներկայումս աւելի շատ մեռնում են թոքերի բորբոքումից, տիֆից և այլ հիւանդութիւններից:

Տեղական ադմինիստրացիան փոխանակ միջոցներ ձեռք առնելու, բոլորովին անտարբեր է, և չը նայելով որ երեք վերստ մեզանից հեռու է, մատների արանքով է նայում մեր վարակված գիւղին: Յանձնաժողովի 10,000 րուբլի նպաստը մեր գիւղի համար մի կաթիլ ջուր է արեան ծովի մէջ:

Մեր գիւղի միակ եկեղեցին բոլորովին քանդված է:

Անցեալ նոյեմբերին գիւղում բացվեց արքունական միդասեան դպրոց: Վարչութիւնը յայտնել է մեզ, որ մինչև առաջիկայ սեպտեմբեր նոր դպրոցը պատրաստ չը լինի, փակվելու է, և 120-ի չափ մանուկներ զրկվելու են դպրոցից:

Ուլիա-Նորաշէնցիքս այժմ զուրկ ենք ամեն միջոցից և ցամաք հացից. հայերի և թուրքերի յարաբերութիւնը շատ լաւ է. գաւառը հանգիստ է. բարերար մարդկանց և յանձնաժողովի աջակցութիւնն ենք խնդրում:

Մինաս Շահնազարեան

ՇԱՏԵՐԻՑ ՄԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Վերին-Ագուլիս, փետրվարի 8-ին

Այս գիշեր, ժամը 12-ին, յայտնի չարագործներ «Ագուլիսի հայ հասարակութեան հսկիչ մարմնի» «արդար և գաղտնի դատավճռի» առաջին մասը գործ դրին անուղղայ «դատավճռներս» վերաբերմամբ՝ ժառերի չորս գնդակ արձակելով ընդունարանիս ու ննջարանիս պատուհաններից ներս:

Անձի վնաս չը պատահեց, որովհետև հակառակ կարծածի և իմ սովորութեան՝ այս անգամ շատ հեռու էի գտնվում այն տեղից, դէպի որը նշան էին առել կեանքիս նոր տէրերը: Վախեց միայն ծերունի մայրս:

Ես վաղուց էի սպասում այսպիսի մի անգլի՝ քաջ ճանաչելով ինքնաստեղծ «հսկիչ մարմնի» ռմբեր և ինչ մարդիկ լինելը: Բայց երանի թէ հարցն իմ վերաբերմամբ միայն լինէր, որ ես տեղի տայի ու ամեն ինչ վերջանար:

Ո՜չ, ընթերցող, վերջին ինն ամսվայ ընթացքում այս ոչ առաջին դէպքն է, ոչ վերջին: Սա շատերից մէնն է միայն: Եւ մինչ մխիթարվում էիր դու, եղբ. հայ, որ գէթ Ագուլիսի նման մի կարևոր անկիւնում ազգակից եղբայրներդ ապրում են խաղաղ ու երջանիկ, ազատ այն բոլոր փոթորիկներից, որոնք միակ բաժինն էին հայկական այլ գաւառների, այստեղ էլ ոչ նուազ մխիթարվում էին մի խումբ մարդիկ, որ հասարակութիւնը լուռ է, որ՝ ինչքան էլ ջարդում են կակոլ՝ խօսող չը կայ, բողոքող չը կայ, և որ ամենից առելին ու սարսափելին է մեր սխրագործների աչքում, գրող, հրապարակ հանող չը կայ:

Լռեր, սակայն, ի՞նչ էր տեսնում Ագուլիսն ու ինչ էր տեսնում է ու, համոզված կաց, պիտի տեսնէ էլ, քանի դեռ կան ու գործում են նրա անդուգական «հսկիչ»-ները: —Թւենք ժամանակագրական կարգով.

ա. Անցած տարվայ յունիսի կէսերին էր, մի մութ և անձրևոտ գիշեր. անօգնական հարազատների մի զոյգ—մի քոյր և մի եղբայր—տուն են դառնում միայնակ. հասարակութեան «արտացան» բարեկամները ողջունում են դրանց 15-ից աւելի ատրճանակի հարուածներով և... փրկում են Հայաստանը... Գնդակների անով փախչում են Ագուլիսից մի ուսուցչի՝ նրա համար, որ «հնչակեան» էր: Միևնոյն մարդիկ, որ ստեղծողներն ու ղեկավարներն էին այդ անցքի, հէնց նոյն պահուն գալիս են պաշտպան հանդիսանալու իրանց վայրագութեան զոհերին. մթութեան ու անձրևի մէջ հեռուից փախչող գոնիսեցի թուրքեր են նշմարում ու մի երկու գնդակ էլ նրանց ետևից արձակում: Եւ այս ամենը, կրկնում եմ, նրա համար, որ փախցնեն մի «հնչակեան» աղանդաւորի գիւղացական յարկի տակից:

բ. Նոյն օրերումն էր. տեղական հնչակեանների խնդրանքով ու հաճութեամբ Ագուլիս էին եկած մի խումբ հնչակեան զինուորներ: Սրանցից մէն, Մուշեղ անունով, օգոստոսի մէջ երբ սպանվեց Վանանդի ճանապարհին թուրք աւազակներից, մեր պարոն «արտացու»-ները դագաղի վրա պսակներ դրին, ճառեր արտասանեցին. բայց երևակայիր, ընթերցող, որ միևնոյն Մուշեղին՝ իր ամբողջ ընկերներով մի քանի օր առաջ Ագուլիսից դուրս էին քշում աներևակայելի, անըմբռնելի խայտառակութիւններով. նոյն իսկ մահվան օրը՝ մէկ կողմից թափում էին կոկորդիլոսի արտասուքներ, միւս կողմից ծաղրում այն մարդասիրական գաղափարները, որոնց սիրոյն զոհ գնաց հանգուցեալը: Կենդանութեան ժամանակ քշել մէկին, մահից յետոյ պսակներով թաղել. ծաղրել գաղափարը, բայց ճառերով ուռեկել նոյն գաղափարի հերոսին դէպի գերեզման,—այս աստիճան փարիսեցի, անպատկառ լինելու համար մարդ պէտք է անդամ լինի տեղիս հասարակութեան այն սակաւաթիւ «հասկացող մասին», որի ժամանակակից տիտղոսն է «Ագուլիսի հայ հասարակութեան հսկիչ մարմին»:

գ. Տողերիս գրողի ներկայութիւնն Ագուլիսում վաղուց էր խանգարում մի ժամանակակից Տէր-Թոդիկի ու սրա պաշտպանների քունը. և ահա վճռում են հեռացնել մի այսպիսի վտանգաւոր տարր, և իբրև արդիւնք այդ վճռի հանդէս են բերում «ցոյց»-եր, որոնք ուրիշ բան չապացուցեցին սակայն, բայց եթէ իրանց սև հոգու ամբողջ մերկութիւնը և ունեցան այն հետևանքը, որ խեղճացած հասարակութիւնը վերջապէս սթափվեց ու զգաց իր ակամայ սխալները: «Հսկիչ մարմնի» հրամայած այս գիշերվայ հրաձգութիւնները շարունակութիւնն են խնամեխայ անասելի սխրագործութեանց: Եւ իրաւունք ունէին մեր պարոն «հսկիչ» ները. մի՞թէ կարելի էր անուշադիր թողնել. ապա եթէ հասարակութիւնը ոտքի կանգնէր, պահանջէր իմ ներկայութիւնը դպրոցում, որի համար անցեալ փետրվարին հեռագրով էին խնդրել Վեհ. Կաթողիկոսից երիտասարդ, կրթուած վարդապետ՝ յօգուտ իրանց աղքատացրած դպրոցի... Դարձեալ ուրեմն դպրոցի հարց, դարձեալ դաժան, բիւրեղացումն վնասակար տարրերից:

դ. Ե՛կ, ընթերցո՛ղ, փոխադրվիր մտքով մի րոպէ Ագուլեաց Թովմա առաքելոյ վանքը, որի շրջափակի կամարներից մէկի տակ, հոկտեմբերի 14-ին, տեղի է ունենում մի ակտ, որ, ըստ իս, անուն չունի: Մեր «արտացու» «հսկիչ» ներն են իրանց ամբողջ միլիտարիզմով 20-ից աւել սպառազինված «տղերք» հրացաններն յենած գետնին՝ անհասկանալի ձայներով՝ սպառնում են մի ողջ հասարակութեան ներկայացուցիչներին—«Ձեզ բոլորիդ կը կոտորենք, ձեր տները կայրենք, կը թալանենք, մենք այսօրվանից խուլիգաններ ենք, մենք էլ դաշնակցական չենք» (թէև մինչև այժմ էլ օգտվում են Դաշնակցութեան ոյժից շահագործման յատուկ օրէնքներով):

Ի՞նչ էին պահանջում.—հնչակեան զինուորների հեռացումը մինչև 24 ժամ, ինչպէս իմ հեռացումը մինչև փետր. 5, որպէսզի աշխարհը մնար իրանց...:

ե. Նոր-տարվայ երկրորդ թէ երրորդ օրն էր. երկու աննման նորեկ ուսուցիչներ առաջնորդում են բազարի միջով իրանց մի քանի զինված ոյժերին. ուզում են մի «ցոյց» սարքել. տեսնում են յանկարծ հնչակեան զինուորներից այս ու այն կողմից երևալն ու ցրիւ են գալիս իսկոյն, մտնում ծակերը: Հասարակութիւնը, միշտ սիրող խաղաղութեան, հաւաքվում է դատարան զանգատով: Նորից դժգոհութիւններ, նորից վրդովմունքներ, մինչև որ մի քանի օրից այդ էլ է անցնում, ինչպէս ամեն բան աշխարհում:

Եւ զ. այս գիշերվայ ցոյցն իմ դէմ, որ արդէն յիշեցի:

Տեսնում ես, ընթերցող, ոչ առաջինն է այս ցոյցը, ոչ էլ, հաւատացած եմ, վերջինը կը լինի: Այո՛, դժբաղդաբար, «ուսուցիչ», «դաստիարակ» անունն են կրում այն մարդիկ, որոնք էլ կակալ չէ մնում, որ չը ջարդեն այսօր մի խեղճ հասարակութեան գըլխին՝ ստեղծելով «հասարակութեան (ուշադրութիւն) հսկիչ մարմին»-ներ, ու դրանցից անբաժան՝ «գաղտնի դատավճիռներ»: Իսկ եթէ այս բոլորի մասին ոչինչ չես լսել, ոչինչ չես կարդացել, պատճառն այն է, որ «գրո՛ղ» չէ եղել:

Ցնոր գրութիւն՝ ցրջափ այստեղ եմ.

Մեսրոպ վարդապետ Մաքսուտեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դորիս, փետրվարի 3-ին

«Սովի տարում գայլերը շատանում են», ասում է ժողովրդական առածը:

Զանգեզուրը տնքում է սովի, կարիքի ճիրանների տակ. օր չէ անցնում, որ քաղցածների լաց, վայնասունը չը տեսնենք. հեռագրերով և կամ գրութիւններով դիմումներ ենք անում զանազան տեղեր նպաստ խնդրելու, որովհետև անձնաժողովը հնարաւորութիւն ունենայ Շուշում թափված ցորենը Գորիս տեղափոխելու. ահա այսպիսի դժուար ու մարմաջիչ րոպէներում տեղեկութիւններ են հասնում մեզ քաղաքներից, թէ մի շարք զանգեզուրցիք փող են հաւաքել Անդրկասպեան երկրների մի քանի քաղաքներում, այն էլ սովեալների անունից, և մինչև այժմ յայտնի չէ թէ նրանք ինչ են արել այդ փողերը:

Չը կամենալով, որ ժամանակի խառնակ դրութիւնից օգտվող խաչագողները չը շահագործեն մեր եղբայրական զգացմունքները, առաջարկում եմ քաղաքների և մանաւանդ Անդրկասպեան երկրում գտնվող քաղաքների հայերին, սովեալների համար, ում և որքան հաւաքած փողերի քանակը հրապարակ հանել հայ թերթերում:

Բնէր ամօթ բարերար ձեռքերը այդ պարոններին, որոնք շահագործում են լացող որբերի արցունքները և քաղցածների պատառը բերանից:

Ագինն մարդիկ թող ինձ պատասխանեն, թէ որոնք են այդ վնասող գայլերը և ինչ են արել նրանք. ես նրանց օձերը չեմ թողնի մինչև մաքուր հաշւետուութիւնը:

Ցանկալի է, որ միւս թերթերը ևս արտատպեն իմ այս նամակը:

Անդամ Զանգ. Յանձնաժողովի՝
Սաղանդարեան

—

Սուրամ, յունվարի 30-ին

«Մշակ»-ի № 279-ում Սուրամից տպված է Յովսէփ քահանայ Առիսեանի հերքումը, որի առիթով Սուրամի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խոնարհաբար խնդրում է տպագրել հետևեալը:

Բոլորովին ճիշտ է ասում Առիսեան քահանան, որ քահանաներին արձակեցինք մենք՝ Դրեկեան, Շուգարեան և Զարգեան, որովհետև նրանք պահանջեցին աւելի ռոճիկ, քան ստանում էին: Նախ քան քահանաների արձակելը մենք՝ հոգաբարձուներս ունէինք խորհուրդ, որին ներկայ էր և չորրորդ հոգաբարձու բժիշկ Մինասեան, որը նոյնպէս համաձայն էր, որ քահանաների տեղը ուրիշ ուսուցիչներ հրաւիրէինք: Բացակայ էր երէցփոխը: Եթէ այս երկու հոգաբարձուներն անդամ հակառակ լինէին, հոգաբարձութիւնը իրաւունք ունէր $3^1/_2$ ձայնով (հաշւելով նախագահի $1^1/_2$ ձայնը) նոր ուսուցիչներ բերելու:

Զրպարտում է Առիսեան քահանան, ասելով, որ մեր ինչ հոգսն է, եթէ դպրոցի աշակերտները սպառվեն և դպրոցը փակվի. մենք կը հեռանանք, թողնելով ասպարէզը ուրիշներին. Մենք բոլորովին հեռու ենք այդ մտքից. մեր նպատակն է բարեկարգել և ծաղկեցնել դպրոցը, որքան կարող ենք:

Հետաքրքիր է իմանալ հայր գործակալից, թէ անցած ութը տարվայ ընթացքում, երբ փակված էր դպրոցը, ինչ եղան եկեղեցական փողերը: Առ 1-ն սեպտեմբերի 1905 թ. մի ցոյց տուին եկեղեցու փողերը 859 րուբլի: Սրանից յետոյ հոգաբարձուներս սկսեցինք ինքներս վաճառել մոմ, և մենք մի տարվայ մէջ 800 րուբլի աշխատեցինք:

Բացի մոմավաճառութիւնից, միւս դպրոցական ապրուստներն էլ բազմապատկեցինք: Աշակերտները բոլորովին ազատ են թոշակից: Ուսումնարանը վերանորոգեցինք, չորս լաւ պատի փառարան շինել տուինք, 40 հատ նոր ձևի նստարաններ շինել տուինք, 3 գրատախտակ, ներքին յարկում բաց արինք նոր երկու լուսամուտ և այլն:

Քահանաները ման են գալիս, գանգատվում, ագիտացիա անում, որ նրանց անիրաւացի արձակեցինք և ուրիշներին հրաւիրեցինք աւելի մեծ ռոճիկներով: Մենք այս բանը գտանք օգտաւէտ դպրոցի համար և նրա համար արինք: Ընթերցողները լաւ կը հասկանան, որ մասնագէտ ուսուցիչներն աւելի արժանաւոր են, քան քահանաները, որ ուսուցիչները կարող են աւելի արդիւնք ցոյց տալ, քան քահանաները, քահանաներին իրանց պաշտօնն էլ բաւական է:

Տէր-Յովսէփին աւելի ևս կատաղեցնում է այն բանը, որ նա այսուհետև չէ կարող այլևս ինքնագլուխ կարգադրութիւններ անել եկեղեցու դրամների վերաբերմամբ, ինչպէս ինքը ցանկանում է: 1903 թ. մայիսին իր բարեկամ երէցփոխից վեր է առել 200 րուբլի եկեղեցական փող Օսիաուրի գիւղի եկեղեցու կառուցման համար, որի համար նա չէ ունեցել հոգևոր իշխանութիւնից հրաման և ոչ ծխականներից համաձայնութիւն:

Եկեղեցու 8 տարվայ մատեանները քննելով, մարդ գտնում է այնպիսի ծախսեր, որ զարմանում է: Մատեանները գրված են իր՝ գործակալ Տէր-Յովսէփի ձեռքով, որը և վաւերացված է: 1903 թ. գործակալը վերցրել է երէցփոխից 366 րուբլի և գնել է զգեստ, որը սակայն նրա կէսը չարժէ: Յովհաննէս Դրեկեան նուիրեց զգեստ 210 ր. արժողութեամբ, որը շատ բարձր է Տէր-Յովսէփի գնածից:

Հոգաբարձութիւնը պահանջում է գործակալ Առիսեանից ներկայացնել 200 րուբլի, որն ապօրինի կերպով նա տարել է Օսիաուրի եկեղեցու համար:

Հոգաբարձուներ
Սուրամի հայոց դպրոցի՝
Ստեփաննոս Դրեկեանց
Аршакъ Шугаровъ

—

Արտիկ կայար. (Անդրկասպ.), 14 փետրվ.

Ուղարկում եմ յարգելի խմբագրութեանդ Կովկասի հայ սովեալների օգտին 42 րուբլի 45 կոպ'կ. որ հանգանակված է հանգուցեալ Աղալար Օհանջանեանի միջոցով Մամետարատում (Աշխաբադի նահանգ, Փարսկաստան) հետևեալ անձերից. Զոհրաբ Մելիք Մուշկամբարեանցից 60 դրան, Սիմէօն Փասպարեանցից 60 դրան, Աղալար Օհանջանեանցից (վախճանված) 40 դրան, Ալէքսան Անթալեանցից 40 դրան, Արշակ Միրզոյեանցից 30 դրան: Գումարն է 230 դրան, որ է 42 րուբ. 45 կոպ.:

Սիմէօն Մարութեանց

—

Ղըլար, փետրվարի 13-ին

Խնդրեմ տեղ տալ Ձեր լրագրում այս երկտողիս:

Մնալով պարտք այժմ գոյութիւն չունեցող Բեռլինի հայ ուսանողական կասսային 59 մարկ (27 ր. 20 կ.) և ցանկանալով այդ գումարը գործադրել բարեգործական նպատակի, խնդրում եմ խմբագրութեանդ յատկացնել այդ 27 ր. 20 կ.-ը Զանգեզուր գաւառի սովեալների օգտին:

Բեռլինի համալսարանի նախկին ուսանող՝
բժիշկ Պետրոս Կարա-Մուրզա

P. S.—Փողը տեղափոխում եմ պօստով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, հինգշաբթի, հայ դրամատիկական խումբը կը տայ յոբելեանական ներկայացում հանգուցեալ դերասան Գ. Պետրոսեանի յիշատակին: Հանգուցեալը չը կարողացաւ տեսնել իր յօբելեանի կատարումը: Դերասանական խումբը յաւերժացնում է յօբելեանի յիշատակը յատուկ ներկայացումով:

—

Այսօր Կիրօչնի փողոցում բացվում է էժանագին գրադարան:

—

Փետրվարի 18-ին Թիֆլիսի գեներալ-նահանգապետը իր մօտ է կանչել 2 րդ արական գիմնազիայի 8-րդ դասատան աշակերտների ծնողներին՝ բացատրութիւն տալու համար:

—

Թիֆլիսի գեներալ-նահանգապետը պատերազմա դաշտային դատարանին է յանձնել Թիֆլիսի բնակիչ՝ Շուշու գաւառի Կըզարծ գիւղացի Արշակ Բաբայեվին Գաբրիէլեանցին և Շուշու բնակիչ Գրիգոր Յարութիւնեան Արզումանեանցին—Լևոն Մովսէսովի ատաղձագործարանի վրա զինված յարձակում գործելու և ոստիկանութեան պաշտօնեաներին զինված ընդդիմադրութիւն ցոյց տալու համար:

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետը կովկասեան պատերազմա-դաշտային դատարանին է յանձնել զինուորական դրութեան օրէնքներով դատելու համար՝ Ցաւէֆիս շինական հասարակութեան գրագիր Դիմիտրի Իմալաշկին, որ մեղադրվում է փետրվարի 2-ի գիշերով, Կօջորի փողոցում, Դաւիթ Սուլխանովի գինետան վրա զինված յարձակում գործելու մէջ:

—

Թիֆլիսի նահանգապետը, ի նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս անասուններ գողանալու և կողոպտելու դէպքերը յաճախ են կրկնվում Սղնախի գաւառում, առանձնապէս Զաքաթալայի վիճակի տարածութեամբ ընկած տեղերում, ուղարկել է այդ գաւառ ոստիկանական պահնորդութեան տեսուչ փոխ-գնդապետ Դուրանովին համապատասխան միջոցներ ձեռք առնելու և սկզբնական տեղական ադմինիստրացիայի գործողութիւնները ղեկավարելու համար: Սրա հետ միասին կարգադրված է Սղնախի գաւառի պահնորդութիւնը աւելացնել առայժմ 18 պահակներով:

—

Ընդհանուր պարտադիր ուսում մտցնելու հարցի նկատմամբ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առաջարկի համաձայն Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը տուել է հետևեալ տեղեկութիւնները. Թիֆլիսում ներկայումս գոյութիւն ունեն ամեն տեսակի 18 դպրոցներ և նրանց վրա ծախսվում է 101,107 րուբլի:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը քաղաքային քարտուղար Ս. Ֆ. Զուբալովին նշանակել է «Извѣстія Тифлисской Городской Думы» թերթի պատասխանատու խմբագիր և որոշել է ներկայացնել գեն.-նահանգապետին հաստատելու համար:

—

Փետրվարի 25-ին, երեկոյեան ժամի 6-ին, 1-ին արական գիմնազիայի շինութեան մէջ Ալ. Խատիսեանը վարժուհիների ընկերութեան օգտին մի դասախօսութիւն է կարդալու հետևեալ թեմայով. «Գործազրկութիւն, հասարակական աշխատանքներ և նրանց մէջ արհեստագործական միութիւնների ունեցած դերը»:

—

Փետրվարի 18-ին անյայտ չարագործներ կոտրելով Երուսալիմսկի միջանցքում գտնվող ս. Գէորգի եկեղեցու պատուհանը, ներս են մտել և գողացել են 120 րուբլի գումարի արժէք իրեր:

—

Փետրվարի 18-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան քարտուղար Օ. Ի. Բէկը ելևէտարաշէից իջնելու ժամանակ ընկել է խողովակի և կոտրել է ձախ ոտքը:

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան ծառայողները, իրանց կեանքի պայմանները լաւացնելու նպատակով, դիմել են Բագուի քաղաքային վարչութեան և առանձին նամակով հարց տուել հետևեալ խնդիրների մասին. 1) եթէ ծառայողը իր ազատ կամքով թողնէ ծառայութիւնը, այդ դէպքում որքան վարձատրութիւն պէտք է ստանայ, 2) եթէ, որ և է պատճառով քաղաքային վարչութիւնը ինքը հեռացնէ ծառայողին, այդ դէպքում որքան վարձատրութիւն պէտք է տայ. դրա քանի ամսական ռոճիկը. 3) ծառայողը որոշ ժամանակ ծառայելուց յետոյ, նրան որքան աւելորդ ռոճիկ պէտք է տալ և որքան ժամանակից յետոյ. 4) ծառայողի հանգստութեան համար և կամ այլ պատճառով արձակուրդ տրվում է և ինչ պայմաններով. 5) կիրակի և տօն օրերի համար ծառայողներին ռոճիկ տրվում է թէ ոչ. 6) 1907 թ. ընթացքում քաղաքային վարչութիւնը եթէ ծառայողների ռոճիկը աւելացրել է, որքանով է աւելացրել, իսկ եթէ դեռ չէ աւելացրել, ինչ չափով պէտք է աւելացնէ:

—

Փետրվարի 17-ին, երեկոյեան ժամը 8-ին, Ցինէմակի փողոցում № 34 տան մէջ, 7 անյայտ չարագործներ ներս խուժելով Տիրակեանի փուռը, մանկան սպանելիքով կորզում են գանձարկղից 50 րուբլի:

—

Մուխրանեան կամուրջը կառուցանելու խնդրով զբաղվող մասնաժողովի վերջին նիստում քննվել և ընդունվել է վերջնական ձևակերպութեամբ պրոֆեսոր Պասոնի ուղարկած յիշեալ կամուրջի յատակագիծը, որ կատարված է ամեն մանրամասնութիւններով և միանգամայն բարեխիղճ կերպով: Կամուրջի քարէ հիմքերի, այլև քարէ մասերի դիտողութիւնը յանձնված է քաղաքային ինժեներ Կօզնովիցկուն: Քննվել է նաև 4 ֆիրմաների առաջարկութիւնը՝ կամուրջի երկաթեղէնը տալու մասին: Ընտրվել են երկու հոգի—Ա. Ի. Խատիսեան և Ա. Ս. Բաբեան, որոնց յանձնարարվում է մշակել իրանց կողմից պայմաններ, ինչպէս անհրաժեշտ ապրանքի գների, այնպէս և գնված նիւթերի վճարը յետաձգելու վերաբերեալ, և այդ պայմանները ուղարկել բոլոր 4 ֆիրմաներին համաձայնութեան համար: Բացի դրանից, ժողովին վճռված է միջնորդել քաղաքային դումային՝ ընտրել մի յատուկ գործադիր մասնաժողով վարչութեանը օգնելու համար Մուխրանեան կամուրջը շինելու գործում:

—

Երէկ Թիֆլիսի բէյալական դպրոցի 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանները դասադուլ արին:

—

Նազուլովսկի փողոցում, № 3 տան մէջ ապրող Ադոլֆ Նովիցկին յայտնել է ոստիկանութեան, որ փետրվարի 16-ին, ցերեկվայ ժամի 1-ին, ինչ որ անյայտ անձնաւորութիւն ներս է մտել բնակարանը և ժողովելով 100 րուբլու արժէքի իրեր, հանգստութեամբ անյայտացել է:

—

Փետրվարի 17-ին, երեկոյեան ժամը 9 և կէսին, Նախալովկայում, Ցէխովի և Աֆանասեվսկի փողոցների անկիւնում Անտոն Կվանտալիանիի գինետունն են ներս վազում 4 զինված անձինք և կատաղի կրակ են պարզում գինետան տիրոջ և այնտեղ այդ պահուն գտնվող երկու յաճախորդների վրա: Անյայտները կրակում են 15 անգամ և հետևանքում բոլորն էլ ծանր վիրաւորվում են. Կվանտալիանին ծոծրակից, իսկ յաճախորդները—Անդրկովկասեան երկաթուղիների գլխաւոր արհեստանոցների վարպետներ — Իվան Գ. Գերմանազաշվիլին երկու գնդակով աջ ոտքից և աջ ոտքից և Ալէքսէյ Զուրաբ Նաւրուզաշվիլին—երկու գնդակով կրծքից: Յանցաւորները փախչում են, իսկ վիրաւորված Կվանտալիանիին ուղարկում են Միքայէլեան հիւանդանոցը, իսկ Նավրուզաշվիլիին և Գերմանազաշվիլիին՝ երկաթուղային հիւանդանոցը:

—

Թիֆլիսում կազմակերպվել է «Նկարարների, նկարիչների և ցուցանակներ գրողների (живописецъ) արհեստակցական միութիւն»: Ընկերութեան կանոնադրութիւնը արդէն մշակված է և մօտ օրերս կը ներկայացվի Թիֆլիսի նահանգապետի հաստատութեան: Ընկերութեան նպատակն է՝ նպաստել յիշեալ արհեստը ունեցողների բարոյական և մտաւոր զարգացման և պաշտպանել նրանց շահերը: Այդ ընկերութեան անդամներ կարող են գրվել 17 տարեկանից ոչ պակաս մարդիկ, առանց ազգի, կրօնի և քաղաքական համոզմունքների խտրութեան:

—

Ինժեներ Ս. Ֆ. Նովոմէյսկին նշանակված է ճանապարհների հաղորդակցութեան կովկասեան վիճակի կառավարիչ: Ինժեներ Ա. Ի. Ֆլօրենսկին նշանակված է վիճակի կառավարչի օգնական: Ինժեներ Գուրչինը—Կովկասի Փոխարքային կից կազմված տեխնիքական խորհրդակցութեան նախագահ:

—

Երևանի գաւառական հօգտարար բաժնի քարտուղար Վ. Ի. Բօգատիրէվին, «Факты» լրագիրը խմբագրելու համար, առաջարկված է թողնել դատաստանական վարչութեան մէջ գրաւած իր պաշտօնը:

—

Շրջանային շտաբը տեսնելով, որ Քութայիսի բանտում տիֆ է երևացել, կարգադրութիւն է արել դադարեցնելու էտապով այդ բանտը և նրա միջից այլ տեղեր բանտարկեալներին էտապով ուղարկելը:

—

Գօրու գաւառի Քարելի գիւղից «Тифл. Листокъ»-ին գրում են: Քարելիի շինական հասարակութեան տանուտէր Դաթա Նադիրաշվիլին բնակիչներու համար իւրաքանչիւր գիւղացուց անցաթղթի վարձ վերցնում է 1 ր. 80 կ.—1 ր. 20 կ. և առհասարակ, որքան քէֆն ուզում է, չը նայած օրէնքով այդ վկայականները և անցաթղթերը պէտք է տըրվեն ձրիաբար:

—

Գանձակում անցեալ տարվայ վերջը տիրում էր ծաղիկ հիւանդութիւնը, իսկ այժմ ազգաբնակութիւնը տանջվում է բծաւոր տիֆից: Այդ վարակիչ հիւանդութեան դէմ, ինչպէս գրում են «Тифл. Листокъ» թերթին, առ այժմ ոչ մի միջոց ձեռք չէ առնված:

—

Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառի Պանիսալու և Պուրխուդ գիւղերի բնակիչները, թւով 896 շունչ, դիմել են իրանց հաւատարմատարների միջոցով Կովկասի Փոխարքային և միջնորդել են նպաստ տալ իրանց, որովհետև հայ թուրքական ընդհարումների ժամանակ նրանք ահագին վնասներ են կրել:

—

Գանձակի նահանգապետը Կովկասի Փոխարքայի դիւանատան ուղարկել է հայ թուրքական ընդհարումներից և բնութեան տարերից վնասված Շուշու գաւառի Սէյրալի և Խալֆալու, Կիմվալի և Աղջաբէդ գիւղերի բնակիչներին անհրաժեշտ մատակարարական և սերմացուի դրամական փոխատուութիւնների (19135 ր.) մանրամասն հաշիւները:

—

Ինչպէս յայտնի է, Բագուի քաղաքային դումայի տնտեսական ործանը գտնվում է խիստ աննախանձելի կրիտիքական դրութեան մէջ: Քաղաքը փող չունի և նրանից նոր գումարներ են պահանջվում քաղաքապետութեան հիմնարկութեան համար: Այս պատճառով էլ Բագուի դուման գումարել է նիստ, զբաղվելու այդ խնդրով: Այդ ժողովում, ի միջի այլոց, արտայայտվել են հետևեալ մտքերը: Բագւում քաղաքապետութեան (градоначальство) հաստատման համար քաղաքից պահանջվող 250,000 րուբլու մասին ձայնաւոր Այվազեանը առաջարկում է, որ քաղաքը Փոխարքայի հետ ներկայացուցիչներ ուղարկէ Տերին Մեծութեան մօտ, խնդրելու, որ կառավարութիւնը հրաժարվի այս տուրքից: Բարբալալ-Իսրաֆիլ Հաջիեվ պաշտպանում է այդ առաջարկը այն պատճառաբանութեամբ, որ քաղաքապետութեան հիմնումը պահանջել են նաւթարդիւնաբերողները, որոնք խոստացել են այդ նպատակով տալ մի միլիոն, բայց այժմ այդ ծախսը բարձում են քաղաքի վրա: Անտոնեանի կարծիքով այդ տեսակ դիմումը քաղաքի կողմից Կայսրին՝ օրինական է, քանի որ, ըստ օրէնքի, քաղաքը պէտք է ոստիկանութեան ծախսերին մասնակցել, բայց ոչ ընդհանուր գումարի կէսից աւելին: Իբրեկին հաստատում է Անտոնեանի կարծիքը և աւելացնում, որ դժբաղդ Բագուին այդ տեսակէտից դրել են առանձին օրէնքների տակ, որովհետև կառավարութիւնը կարծում է, որ Բագուն հարուստ քաղաք է: Կառավարութիւնը կամ պէտք է քաղաքի հասոյթները աւելացնելու միջոցներ ցոյց տայ և կամ հրաժարվի նրանից — պահանջված նոր տուրքից: Հաջինսկին այն կարծիքն է յայտնում, որ ձայնաւորները առհասարակ խօսում են միայն, խօսում գեղեցիկ, բայց ոչինչ գործնական կարգադրութիւններ չեն յանձնում: Օրինակ հեռախօսի հարցը, այն վէճը, որ մղվում է քաղաքի և նաւթարդիւնաբերական խորհրդի մէջ: Երկար վիճաբանութիւններից յետոյ ընտրվում է մի մասնաժողով նոյն հարցի մասին տեղեկագիր կազմելու և ուղարկելու Թիֆլիս, Փոխարքային և Պետերբուրգ: Ընտրվում են մասնաժողովի անդամներ՝ Ահմէդ բէգ Աղայեվ, Իբրեկի, Ահմեդով, Հաջիեվ, Թաղիանոսեան:

—

Անցեալ համարով հաղորդել էինք, որ պարսից հիւպատոսարանի քարտուղար Ջաւադ խան Աղայեվին անյայտ անձինք վիրաւորել են: Այժմ Բագուի լրագիրներից տեղեկանում ենք, որ այդ մահափորձի առթիվ ձերբակալվել են Սադաթ Կուլի Միրզա Րահիմ օղլի, Թաղի Իւսուֆ օղլի և Հաջի Ալի Ասկար Բաքիր օղլի: Բայց նախնական հարցաքննութիւնը պարզել է, որ ձերբակալվածները այդ գործում մասնակցութիւն չեն ունեցել: Գոնէ նրանց յանցաւորութեան մասին հաստատ ու վճռական փաստեր չը կան:

—

Մի քանի օր առաջ Սենակի բանտում բանտարկել էին մի ծերունու, որը մեղադրվում էր նրանում, որ ոստիկանութեանը չէր ցոյց տուել իր որդու բնակարանը: Այժմ ծերունին ադմինիստրատիվ կարգով աքսորվել է հիւսիսային նահանգը:

—

Ռուս ժողովրդի դաշնակցութեան Պետերբուրգի բաժանմունքը հեռագիր է ուղարկել Բաքձրա ... անունով և խնդրել Հերցենշտէյնի սպանութեան մէջ մեղադրվողներին յանձնել ռուսաց դատարանին, որովհետև ֆինլանդական դատարանը անշուշտ չէ վիրաբերվում դէպի մարդասպանները: («Рѣчь»)

—

Օդեսսայի անկարգութիւնները շարունակվելու պատճառով տեղական օտարերկրեայ հիւպատոսարանները դիմել են Պետերբուրգի իրանց դեսպաններին և խնդրել հարկաւոր կարգադրութիւնն անել օտարահպատակների պաշտպանութեան համար: Այդ տեղեկութիւնները ստանալուն պէս մեծ պետութիւնները իսկոյն դիմում են անում ռուսաց կառավարութեանը: Մօտ օրերս ռուսաց արտաքին գործերի մինիստրը յայտնել է դեսպաններին, որ հարկաւոր կարգադրութիւնները արդէն արված են և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնված օտարահպատակների պաշտպանութեան համար: Երևի այդ է պատճառը, որ Օդեսսայից հեռագրում են, որ այն բնակարանների վրա, ուր ապրում են օտարերկրեայ հիւպատոսները, բարոն Կաուլբարսի կարգադրութեամբ զինուորական պահակներ են նշանակված: («Рѣчь»)

—

Պետական Դումայի պատգամաւոր Կարաւայէվը փետրվարի 14-ին Եկատերինօսլավից ստացել է հետևեալ հեռագիրը. «Ալէքսանդրովսկի ազգաբնակութեան մէջ սարսափ է տիրում: Ռուս ժողովրդի դաշնակցութիւնը ռազմախմբեր է կազմակերպում: Օդեսսայից ռեգիններ են բերել տուել: Արդէն գաղտնիութեան 18 դէպք է տեղի ունեցել: Դաշնակցական Շչեկոտիխինը, որ զինված յարձակում էր գործել կրպակի վրա կողոպուտ անելու նպատակով, կալանաւորվելուց յետոյ ազատվում է ոստիկանատանը: Խնդրեցէք մինիստրից միջոցներ ձեռք առնել»: Կարաւայէվը իսկոյն և եթ հեռագիրը յանձնել է Ստոլիպինին:

—

«Р. В.» լրագիրը ասելով այն լուրը՝ թէ երկրորդ Պետական Դուման բացվելու է առանց գահական ճառի, այժմ հաստատում է: Ստացված տեղեկութիւններից երևում է, որ Դումայի բացումը տեղի կունենայ Տաւրիկեան պալատում առանց որևէ հանդիսաւորութեան: Պատգամաւորներին իսկոյն և եթ կառաջարկվի նախագահ ընտրել: Պետական Դումայի նախագահի պաշտօնի թեկնածուների թւում յիշում են և Վ. Դ. Կուզմին-Կարաւայէվին: Կառավարչական շրջաններում առայժմ Դումայի արձակման մասին չեն խօսում, բայց շատ յոյս են դնում նրանց օպպոզիցիայի պառակտման հնարաւորութեան վրա և մանաւանդ մեծ նշանակութիւն են տալիս այն հանգամանքին, որ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը ինքնուրոյն մեծամասնութիւն չէ ունենալու:

—

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան կենտրոնական կոմիտեաը փետրվարի 13-ի իր նիստում քննել է ընդհանուր ներումն շնորհելու հարցը: Կուսակցութեան պարլամենտական ֆրակցիայի նիստը քննվել է փետրվարի 6-ին: («Новь»)

—

Սև հարիւրեակը, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, հանգիստ չէ թողնում կոմս Վիտտէին: Օրից օր աւելի ու աւելի են գրութիւններ ուղարկում նրան, որտեղ առաջարկում են

կամսին անմիջապէս գնալ արտասահման, ապա թէ ոչ վերջը ուշ չի լինի: Այդ գրութիւնները մանաւանդ աւելացան այն օրից, երբ կոմս Վիտտէն այցելութիւն տուեց իշխան Սվեատօպօլկ-Միրսկուն:

—

«Сегодня» լրագիրը հաղորդում է, որ ռուս ժողովրդի դաշնակցութեան գլխաւոր վարչութիւնը մօտ օրերս ժողով է ունեցել, որտեղ դաշնակցութեան գաղտնիքների մերկացման առաջն առնելու նպատակով որոշել է ամեն տեսակ միջոցներով արգելք լինել Հերցենշտէյնի սպանութեան համար կանչված վկաներին դատարանին ներկայանալու, գոնէ մինչև Պետական Դումայի բացումը:

—

«Vossiche Zeitug» լրագիրը հաղորդում է, որ իբր թէ գեներալներ Կաուլբարսը, Գրիպպենբերգը, Ռենենկամֆը և Բիլդերլինգը իւրաքանչիւրն իր կողմից մենամարտութեան է հրաւիրել գեներալ Կուրօպատկինին «ռուս-ճապօնական» պատերազմի առիթով գրած իր գրքի մէջ նրանց մասին արած նկատողութիւնների պատճառով:

—

«Рѣчь» լրագրի ասելով, ըէակցիօն բանակը, ինչպէս լուր է պտտում, ամեն ճիգ գործ է դնում իր դիրքերը պահպանելու համար: Նրանք ինչ որ դաւեր են պատրաստում Դումայի գործունէութիւնը խանգարելու համար:

—

Պարիզից «Русск. Сл.» լրագրին հեռագրում են, որ նախկին մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր Ռուվիէն, բանկիրների յայտնի սինդիկատի գլխաւոր դիրեկտորը, որ ջանք էր գործ դնում ռուսական փոխառութիւնը աջողեցնելու համար, ձեռնարկում է մի մեծ թերթի հրատարակութեան, որ նուիրված պէտք է լինի ռուսաց գործերին:

—

«Рус. Сл.» լրագրին Պարիզից հեռագրում են, որ պարիզեան լրագիրները լի են Օդեսայից ստացված տեղեկութիւններով: Բոլորն էլ ընդունում են, որ անհրաժեշտ է յետ կանչել գեն. Կաուլբարսին: Լրագիրները ուշադրութեամբ հետևում են Պետական Դումայի ընտրութիւններին և գտնում են, որ օպպօզիցիայի աջողութեան գլխաւոր պատճառը հէնց ինքը Ստոլիպինն է:

—

Քութայիսի ըէալական դպրոցը առայժմ չէ հանդարտվել: Անցեալ շաբաթվայ ընթացքում օր չէ անցել, որ աշակերտները մի քանի տասնեակ ըուբլիների ապակիներ չը կոտրէին: Բացի սրանից համարեա բոլոր դասարաններում պատառոտել են ցուցակները: Նոր հիմնված ծնողական ժողովի անդամները եռանդուն կերպով աշխատում են աշակերտներին հանգստացնել, բայց մինչև այժմ չէ աջողվել: («Իս.»)

—

«Русь» լրագրի ասելով, փետրվարի 13-ին, երեկոյեան ժամի 8-ին, Պետերբուրգի Նադեժդինսկայա փողոցի վրա գտնվող № 22 տան մէջ իր բնակարանում սպանվել է «Ապոլլօ» թատրոնի խմբի դերասանուհիներից մէկը Տատիանա Լէբեդևան: Սպանվածին գտել են յատակի վրա ընկած, արիւնաշաղախ և ջարդված գլխով: Նրա կողքին ընկած է եղել արիւնոտ արդուկը (ութօն): Առայժմ յայտնի է միայն այն, որ հանգուցեալը սպանութիւնից մի օր առաջ գրասենեակներից մէկի միջոցով վարձել է ադախին և տուն տարել, գրասենեակից վերցնելով միևնոյն ժամանակ ադախնու անցագիրը: Ցաջորդ օրը այդ ադախինը կասկածելի է թուացել Լէբեդևային, այդ պատճառով նա փակել է այն սենեակի դուռը, ուր պահվում էին իր թանկագին իրեղէնները և գնացել մի ուրիշ կանտօրա նոր ադախին վարձելու: Տուն վերադառնալով նա տեսնում է իր կողպած սենեակի դուռը կոտրված և ադախնին ներսում իրերը քըքըելիս: Ադախնի և Լէբեդևայի միջև կռիւ է տեղի ունենում, որի ժամանակ առաջինը նախապէս պատրաստած արդուկով խփում, ջախջախում է Լէբեդևայի գլուխը և տեղն ու տեղը սպանում: Սպանութիւնը կատարելով ադախինը վերցնում է իր անցագիրը, որ դեռ ևս ներկայացված չէ եղել ոստիկանութեանը, և անյայտանում:

—

Ոստիկանական դեպարտամենտի փոխ-դիրեկտոր Զուբօվսկին ծրագրում է այսուհետև քաղաքական ադմինիստրատիվ կալանաւորներին աքսոր ուղարկել ոչ թէ Սիբիր և Ռուսաստանի հիւսիսային նահանգները, այլ Տուրկեստանեան երկիրը: («Новь»)

—

Վարշավայի կօշկեղէնի շուկան ներկայումս կրիզիսի մէջ է: Այդ կրիզիսը սակայն վերաբերում է միայն տղամարդկանց և կանանց կօշկեղէնին, իսկ մանկական կօշիկների առևտուրը, ինչպէս և պահանջը վերջերս ոչ միայն չէ պակասել, այլ և բաւականաչափ աւելացել է: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ մանկական կօշկեղէնները Վարշավայում պատրաստվում են մեքենայական եղանակով, և դրա շնորհիւ Վարշավայի վերջին գործադուլները այնքան էլ չեն կարողացել ազդել կօշիկների այդ տեսակի գների բարձրացման վրա: («Т. П. Г.»)

—

Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտում փոխանակ նախկին տարիների նման գարնան սեմեստրի ընթացքում սովորական քննութիւն բռնելը, կիսամեակ քննութիւնները տեղի կունենան միայն գարնան սեմեստրի վերջում, դասախօսութիւնները վերջանալուց յետոյ: Իբրև բացառութիւն թոյլատրվում է վերջին սեմեստրի ուսանողներին, որոնք կիսամեակի քննութիւնները չեն տուել, քննութիւն բռնել մարտ ամսի երկրորդ կիսում, աւարտման վկայականը ստանալուց առաջ: Այն ուսանողները, որոնք այժմ վերջացնում են կուրսը, կարող են նախկին տարիների նման ստանալ աւարտման վկայական և առաջիկայ գարնանը պետական քննութիւն բռնել: Պետական քննութիւնների համար սահմանված կանօնները իրաւունք են վերապահում ուսանողներին քննութիւն տալ պարտադիր առարկաներից կիսամեակի քննութիւնների ժամանակ, յետաձգելով պետական քննութիւն տալու ժամանակը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լայպցիգ, փետրվարի 24-ին (ն. տ.)

Սօցիալ-դեմօկրատների այս վերջին ընտրողական պարտութիւնը բաւականին լուրջ քննութեան նիւթ է դարձել նոյն կուսակցութեան զանազան օրգաններում: Դէպքը լինելով հազուագիւտ և միանգամայն անսպասելի հանգամանքների մէջ՝ արժէր աւելի ուշադրութիւն դարձնել այդ երևոյթի վրա, քանի որ իր մէջ բաւականին ուսանելի դասեր է պարունակում, ուստի և կը բերեմ այստեղ մի քանի յայտնի անձնաւորութիւնների քննադատական եզրակացութիւնները:

Ռեվիզիօնիստների մէջ յայտնի Բերնշտայնը և Կալվերը «Sozial. Monatrhefte» ամսագրում երկու քննադատական յօդուածներ են նուիրել այդ խնդրին: Կալվերը այս պարտութեան գլխաւոր մեղքը գցում է իր կուսակցութեան և մանաւանդ նրա ագիտացիայի ձևի վրա. շատ անգամ այդ ագիտացիան լինում է սխալ լուրերի և հիմքերի վրա և առանց ի մօտոյ ճանաչելու բանւորների ներկան և նրանց հոգեբանութիւնը, առանց երկար ու բարակ մտածելու ըէալ երևոյթների մասին և լուրջ եզրակացութիւններ հանելու, օրինակ, ներկայ ընտրողական ագիտացիայի ժամանակ սօցիալ-դեմօկ. ագիտատօրները ընտրողական պարոլը «քաղցն» էին դարձրել, այն ինչ իրողութիւնը ցոյց է տալիս, որ այժմ բանւորները աւելի լաւ դրութեան մէջ են, աւելի մեծ օրավարձ են ստանում, քան 1903 թւականին, ուստի և այդ հանգամանքը կարող է բանւորների մէջ կասկած ծնեցնել դէպի իրանց ագիտատօրների հայեացքների ճշտութեան վրա ընդհանրապէս: Նա բերում է այլ ուրիշ փաստեր, որոնք կարող էին պատճառներ դառնալ այս վերջին պարտութեան:

Բերնշտայնը նոյնպէս այս պարտութեան գլխաւոր մեղքը իր կուսակցութեան վրա է ձգում: Նրա կարծիքով սօցիալ-դեմօկրատիան մշտական աճումի մէջ պէտք է լինի, սակայն նրա աճման այն չնչինութիւնը, որը ցոյց տուեց այս ընտրութիւններին, եզրակացնել է տալիս, որ կուսակցութիւնն աւելի յետադիմութեան մէջ է և մասամբ ընկել է նրա բարոյական հեղինակութիւնը—հմայքուսը: Սա ևս ագիտացիայի ձևի մէջ սխալներ է տեսնում և այս վերջին պարտութեանը նրա կարծիքով ամենից աւելի նպաստել է այն աններողամտութիւնը, նեղսրտութիւնը, որը, վերջերս մանաւանդ, իշխում է իրանց կուսակցութեան մէջ: Նա սօցիալ-դեմօկրատիայի վերջին տարիների կօնգրէսները միջնադարեան «հաւատաքննութեան» (Ketzergericht) տեղեր է անուանում. նա պախարակում է իրանց մամուլի տոնը և լեզուն, որին նոյն իսկ ամենահաստ ջղեր ունեցողներն անգամ դիմանալ չէին կարող: Այս բոլորը ցոյց են տալիս, որ փոփոխութեան դեռ շատ բաներ կան: Բերնշտայնը ընդունում է, որ ներկայ բոյկոտադում նորից իշխում է ըէակցիան և որը միմիայն լուծվել և տապալվել կարող է բուրժուական և պրօլետարական դեմօկրատիայի համաձայնութեան դաշինքով:

Մի ուրիշը, պ. Գեօհրէ «Die neue Gesellschaft» սօցիալիստական շաբաթաթերթում նոյնպէս մի հեռաքրքիր յօդուած է նուիրել նոյն խնդրի առիթով, որի հետ ևս ծանօթանալը բաւականին շահեկան է: Սրա կարծիքով ևս սօցիալ-դեմօկրատիայի պարտութեան գլխաւոր պատճառը չը պէտք է տեսնել քաղաքական միւս կուսակցութիւնների մէջ, այլ հէնց իր սօցիալ-դեմօկրատիայի մէջ: Նրա կարծիքով այս ընտրութիւններին քաղաքական կուսակցութիւնները մի առանձին ուժեղ բլօկ չէին կազմել սօցիալ-դեմօկրատիայի դէմ, քան 1903 թ-ին, իսկ եթէ տարբերութիւն էլ կար, դա այնքան չնչին էր, որ դրանով չէ բացատրվում երևոյթի հիմնական պատճառները: Շատերը ուզում են սօցիալ-դեմօկրատիայի պարտութիւնը բացատրել նրանով, որ այս անգամ հին չընտրողները աւելի մեծ քանակով մասնակցեցին ընտրութիւններին, սակայն սա էլ, Գեօհրէի կարծիքով, մի առանձին փաստ չէ դէպքը բացատրող. որովհետև չընտրողները լինում են ընդհանրապէս այնպիսի անհատներ, որոնք դժգոհ են քաղաքական միւս կուսակցութիւններից և դեռ չեն ցանկացել սօցիալ-դեմօկրատիայի հետ միանալ. ուրեմն ինչու այդ մարդիկ նորից դարձան դէպի քաղաքական կուսակցութիւնները և ձայն չը տուին սօցիալ-դեմօկրատիային: Ինչու պարտվեց կուսակցութիւնը, քանի որ ներկայ քաղաքական կեանքը աւելի նպաստաւոր էր սօցիալ-դեմօկրատիայի ագիտացիայի համար:

Գեօհրէն հետևեալ պատճառներն է թւում. նախ կուսակցութեան մէջ պատահող վերջին դէպքերը՝ անհամերաշխութիւն, ներքին կռիւները, հալածանքները կուսակցութեան այն անդամների վերաբերմամբ, որոնք կուսակցութիւնը քննադատելու յանդգնութիւն են ունենում և մանաւանդ իրանց մամուլի տգեղ վիճաբանական ձևերը: Պարտութեան միւս գլխաւոր պատճառը այն տխմար արհամարհանքն է՝ որը սօցիալ-դեմօկրատական մամուլը և կուսակցութեան վարիչները ցոյց են տալիս դէպի այսպէս կոչված «Mitläufer»-ները *) (միասին գնացող):

Հեղինակի կարծիքով դա սխալ է. իրանք չը պէտք է յենվեն միմիայն ինդուստրիել բանւորների վրա, այլ և առհասարակ այնպիսի տարրերի, որոնք դժգոհ են և իշխող շրջաններին չեն պատկանում. օրինակ մանր գիւղացիները եայլն: Նա էլ ընդունում է, որ սօցիալ-դեմօկրատիայի կորիզը պէտք է գործարանական բանւորը լինի, սակայն այդ կորիզի շրջապատը, պատեանը պէտք է կազմեն միւս տարրերը, «Mitläufer»-ները: Չէ՞ որ հէնց ընտրողական ագիտացիայի ժամանակ գլխաւոր հոգսն այն է, ոչ-բանւոր տարրերի ձայներ ևս վաստակել: Եւ այս բոլորից յետոյ այն եզրակացութեանն է գալիս, որ պէտք է փոխել իրանց թէօրիայի և պրաքսիսի որոշ կէտերը և յարմարեցնել ժամանակին, որովհետև պարտութեան պատճառը իրանց ժամանցած թէօրիան էր:

Ինչ վերաբերում է գերմանական սօցիալ-դեմօկրատիայի մէջ այժմ իշխող նեղսրտութեան և անհամբերողութեան դէպի իր քննադատ անդամները՝ կարող է հետևեալ ինձ ծանօթ դէպքը ծառայել: Հայ-Թուրքական կոտորածների ժամանակ Լայպցիգի ուսանողներս դիմեցինք Բերնշտայնին այդ նիւթի մասին խօսելու համար. նա սիրով համաձայնվեց դասախօսել հետևեալ վերնագրի տակ՝ «Հայ-Թուրքական կոտորածները և ռուս կառավարութեան մեղքը», եթէ համաձայնվէ տեղս սօցիալ-դեմօկրատների վարչութիւնը այդ դասախօսութեան կազմակերպման գոնէ անուանական պատասխանատուութիւնը իր վրա վերցնել. սակայն վարչութիւնը չը համաձայնվեց, որովհետև մեծ դեր խաղաց այդ խնդրում այն բանը, որ իրանց ընկեր Բերնշտայնը մարքսիզմի քննադատներիցն էր:

Ռւս.

*) Mitläufer են կոչվում այն մարդիկ, որոնք ձայն են տալիս սօց.-դեմօկրատիային, սակայն նրանց վրա երկար յոյս չէ կարելի դնել. օրինակ կրթվածներ, մանր բուժուազիան և այլն և այլն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 փետրվարի:

ՍՕՖԻԱ, 18 փ.: Կայացաւ օպպօզիցիայի կազմած միտինգը: Մի բանաձև կայացվեց, որով դատապարտվում է ներքին քաղաքականութիւնը և հրաւիրվում է ժողովրդին՝ անվստահութիւն յայտնել կաբինէտին: Միտինգից յետոյ ամենքն էլ հանգստութեամբ ցրվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փ.: Կրօնշտադում, Ալէքսանդր I-ի նաւահանգստում վարակվելով ժանտախտից, վախճանվել է արևելեան-սիբիրի հրացանաձիգ զօրքի բժիշկ Շրէյդէրը 41 տարեկան հասակում: Հանգուցեալի աճիւնը այրելուց յետոյ կը թաղվի առանձին տեղում: Նա շատ աշխատել է ժանտախտը բուժելու վրա և եապօնական պատերազմից յետոյ $1\frac{1}{2}$ տարի Մօնղօլիայի գաղութներում հետազօտում էր ժանտախտի բացիլները և մանրամասն ուսումնասիրում: Լրագիրները մի շարք համակրական յօդուածներ են նուիրում և առաջարկում են գիտութեան նահատակի յիշատակը անմահացնել նրա անունով յատուկ Ֆօնդ հաստատելով:

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 18 փետրվարի: Լուր է ստացված, որ Բարձրագոյն հրամայված է Ալէքսանդրօվսկ կայարանում զինված ապստամբութեան համար 8 հոգուն վճռած մահվան պատիժը փոխարինել աքսորով:

ՄՕՆՊԵԼԻԷ, 18 փետրվարի: Պալատի երկրորդ լրացուցիչ ընտրութիւններին վերընտրվեց Լըրուա Բօլիէն, որի առաջին ընտրութիւնը պալատը բեկանել էր:

20 փետրվարի

ԿՐԱՍՆՕԵԱՐՍԿ, 19 փետր.: Քաղաքից 20 վերստ հեռաւորութեան վրա գիւղացիների հողերում գտնվել են քարածուխի հարուստ հետքեր: Սկսել են ձեռնարկել փորելու:

ՊԱՐԻԶ, 19 փետր.: Անգլիական պրեմիէրի յօդուածը արմատական մամուլը ընդունում է յոռետեսութեամբ: Նոյն կերպ է վերաբերվում և չափաւոր մամուլը: «Օրօր» և «Ռադիկալ» թերթերը ապացուցանում են, որ անգլիական առաջարկութիւնը չէ կարող բնաւ գործնական հետևանքներ ունենալ:

ԷՅԶԵՆԱԽ, 19 փետր.: Տեղումս նիստեր գումարող խաղաղութեան գերմանական ընկերութեան կօնգրէսը հրաւէրներ է ուղարկում օգոստոսի վերջերին Միւնխէնում կայանալիք խաղաղութեան միջազգային կօնգրէսի համար: Բիւլօվին մի հեռագիր է ուղարկված, որով շնորհակալութիւն է յայտնվում երկրորդ խաղաղարար կօնֆերենցիայի գումարմանը աջակցութիւն ցոյց տալու համար:

ՎԻԵՆՆԱ, 19 փետր.: Կայսրը պրօֆեսոր Մարտէնսին ունկնդրութեան ընդունեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետր.: Երէկ կազմվեց աջակողմեան մամուլի—թէ մայրաքաղաքի և թէ գաւառական ներկայացուցիչների միութիւն: Ներկայացուցիչների թիւը 12 է: Նախագահ ընտրվեց իշխան Մ. Լ. Շախօվսկին: Կազմվեց բիւրօ: Կազմակերպվում է յատուկ խմբակ՝ յիշեալ մամուլի գրուածքները վաճառելու համար:

ԲՕՍՏՕՆ (Նիւ-Ջէրսի): 1000 պուդ ուժանակի պայթում առաջացաւ: Առայժմ հաշւել են 15 սպանված:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 19 փետրվարի: Ռուզվէլտը 100 դօլլար նուիրեց Ռուսաստանի քաղցածների օգտին ժողովարարութիւն անող Նիւ-Եօրկի մասնախմբին, որին ուղղած նամակում Ռուզվէլտը շեշտում է, որ Ռուսաստանը անցեալում եղել է Ամերիկայի բարի բարեկամը և հրաւիրում է նպաստել նոյն գործի օգտին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետրվարի: Ուսումնաբանական վիճակի տեսչի թոյլտուութեամբ Պետական Դումայի բացման օրը կրթական հաստատութիւններում պարապմունքներ չեն լինի:

ՈՒՖԱ, 19 փետր.: Առաւօտեան ժամը $10\frac{1}{2}$-ին, փողոցում բրաունինգով սպանվեց բանտապետ Կօլբէն: Մահմեդական-ռամկավարները բռնեցին մարդասպաններից մէկին, որը յայտնեց թէ ինքը ուղարկված է յեղափոխական կազմակերպութեան կողմից:

ԼՕՆԴՕՆ, 19 փետր.: Ժօզէֆ Չեմբերլէնը մեկնեց Ֆրանսիայի հարաւ: Նրա առողջութիւնը բաւական վատացել է. կրում է ակնոցներ, դժուարութեամբ է ման գալիս, յենվելով աղջկայ և բժիշկների ձեռքերին, որոնք մշտապէս նրա մօտ են:

ԲԱՐՑԵԼՕՆԱ, 19 փետր.: Երէկ ընդհարում տեղի ունեցաւ հանրապետականների և նրանց հակառակորդների միջև: Ծանր վիրաւորված է մէկը, մի քանիսը վիրաւորված են:

ԿԻԵՎ, 19 փետր.: Լէվենսօնի բնակարանում գտնվել է սօցիալ-դեմօկրատների տպարանը: Գրաւված են 20 պուդ տառ, 700 թռուցիկներ և կնիք:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 փետր.: Երեկոյեան ժամը 10-ին Գատչինայից Անգլիա մեկնեց Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնան: Ճանապարհ դրին Կայսերական Տունը, անգլիական և դանիական դեսպանները: Թագուհուն ուղեկցում է Լօնդօնում ռուսաց դեսպան կոմս Բէնկէնդօրֆը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՋԻՆՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:
Գ. Ե. Գուրդենօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—$6\frac{1}{2}$—$7\frac{1}{2}$ ժ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
74—100

Հրատարակիչների և գրավաճառների
ուշադրութիւն
Առաջիկայ մարտ ամսում լոյս կը տեսնի տոկոսների հաշուարարութեան ԱՄԵՆԱՃՈԽ ադիւսակը.
«ՏՈԿՈՍԱՑՈՅՑ» (Указатель процентовъ). ՆՈՐ ՄԻՋՈՑ. ձոխ, արագ, հեշտ և ճիշտ հաշւելու: Երկարամեայ գործնական փորձերի վրա հիմնված ու մասնագէտներից վկայված որպէս ամենաընտիրը իր տեսակում: Կատարում է. 1. մի կօպէկ կապիտալից միլիարդաւոր ըուբլիներ, 2. կէս ժամից սկսած միլիօնաւոր օրերի համար, 3. մինիմում %-ից (1/1000 %, 1/100 %, 1/96 %) սկսած ամբողջ թւերի հետ միասին. 4. արդիւնքը (շահը) կօպէկներով կոտորակների հետ առանց կոտորակի: Գինն է մի օրինակի մէկ ըուբլի. մեծ գումարով պահանջողին մեծ զիջում:
Դիմել կազմողին՝ Александрополь Петросу Гайказуни. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Չորեքշաբթի, փետրվարի 21-ին
նշանակված է
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
Սկիզբը երեկոյեան ժամը 10-ին:
Դիմակներով պարտաւորեցուցիչ է մնալ մինչև վերջ:
Զգեստի ձև. զինուորականները սովորական զգեստով, քաղաքացիները սև սիւրթուկով, տեղացիները ազգային զգեստներով: Տոմսակները տրվում են ժողովարանի գրասենեակում:
(ե. չ.) 2—2

Թիֆլիսի Ժողովարան
Թիֆլիսի Ժողովարանի աւագների խորհուրդը խնդրում է պ.պ. անդամներին և կանդիդատներին, թիւրիմացութիւններից խուսափելու համար, որը կարող է ծագել անդամների և նրանց ընտանիքների ժողովարան մտնելու ժամանակ ընտանեկան և ուրիշ երեկոյթներին, նախօրօք վերցնեն անուանական կօնտրամարկաներ, որոնց ներկայացնելը կարող է պահանջվել մուտքի ժամանակ: Կօնտրամարկաները տրվում են ժողովարանի գրասենեակում ամեն օր, երեկոյեան 8—11 ժամը:
13, 21, 25 2—3

Ցանկացողներին
Թիֆլիսում, Սիօնին մօտիկ, Հերակլեան փողոցի վրա գտնվող № 15 փուլ եկած խանութը պատկանում է Սևանայ վանքին: Տրվում է ցանկացողներին, իրանց ծախքով շինեն, իրանք նստեն խանութը, կամ վարձով տան որոշ ժամանակով:
Ցանկացողները թող իրանց պայմանները յայտնեն նամակով՝ հետևեալ հասցէով. Въ Еленовку Эрив. губ., епископу Саркису Филоянцу. (չ) 2—5

ՏԻԿ. Ե. Մ. ՆԱԴԻՐԵԱՆԻ
ՀՈՂԵՐԻՑ, որ գտնվում է Արսենալի մօտ, յայտարարում ենք ի գիտութիւն տուն շինելու հող առնողների, որ կարող են դիմել Կովկասեան գրավաճառանոցում ժամը 12-ից մինչև 2-ը ամեն օր. գրավաճառանոցը գտնվում է Ալէքսանդրեան այգու դիմաց, «Լօնդօն» հիւրանոցի տակը: Գների համար կը յայտարարվի առանձին:
(տ. օ.) 2—20

Պ. Եա. Աւսարգիսօվի
ՏՆԿԱՐԱՆԸ
բաց է թողնում արտասահմանի, Ռուսաստանի և տեղական տեսակի
պտղատու ծառեր
Երաշխաւորված գներով
Ст. Скра зак. ж. дор. Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի:
(չ.) 1—10

Խնդրվում է մի հայ ընտանիքի համար մի ՀԱՑԹՈՒԽԻ Է ՊԷՏՔ տնտեսուհու պաշտօնով. ամբողջ տան իրաւունքը իր ձեռքին է լինելու. գործը թեթև է և վարձը ըստ արժանաւորութեան մինչև 15 րուբլի ռոճիկ և տարեկան մի ձեռք զգեստ: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը:
(կ. չ. ու.) 5—5

ОТКРЫТА ПОДПИСКА
на политич. общественную, литературную и экономическую
ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„Кавказская Жизнь“
Въ газетѣ принимають участіе: составъ сотрудниковъ бывшей «Кавк. Жизни», «Кавк. Недѣли» и часть сотрудниковъ «Кавк. Рѣчи».
Газетѣ обѣщано сотрудничество лучшихъ мѣстныхъ силъ.
Газета имѣетъ собственныхъ корреспондентовъ въ Парижѣ, Вѣнѣ, Берлинѣ, Тавризѣ (Персія) и др., а также въ Петербургѣ, Москвѣ, Баку, Батумѣ, Елисаветполѣ и другихъ городахъ Кавказа.
Подписная цѣна съ доставкой и пересылкой
До конца года—7 р., полгода—4 р., четверть года—2 р., 1 мѣс. 75 к.
За-границу: 1 годъ—10 руб., полгода—6 руб., четверть года—4 руб.
Для годовыхъ и полугодовыхъ подписчиковъ разсрочка: при подпискѣ 2 р. и послѣ каждый мѣсяцъ по 1 рублю.
Подписка принимается въ главной конторѣ изданія: Тифлисъ, Дворцовая улица, домъ Грузинскаго Дворянства, и въ агентствахъ конторы:
1) Книжный магазинъ «Образованіе», Михайл. пр., д. 78.
2) Головинскоій пр., 39 контора типографіи Т. М. Ротиніанца, противъ цирка.
3) Головинскій просп., табачный магазинъ Н-въ Сафарова.
4) Эриванская пл., книжный кіоскъ «Паросъ».
5) Штабная, уг. Дворцовой, книжный магазинъ «Гуттенбергъ».
Иногородніе обращаются исключителрно въ главн. контору.
Редакторъ-издатель И. Я. Францеско
Редакція газеты «Кавказская Жизнь» предлагаетъ обмѣнъ объявленіями. 1—3

Յայտարարվում է համաձայն Երևանի Քաղաքային Խորհրդի 1907 թ. յունվարի 17-ի որոշման

Քառամեակի սկզբից 1903—1907 թւից մինչեւ 1907 թ. փետրվարի 1-ը ճշտված է եղել Երևանի քաղաքային խորհրդի 85 հերթական եւ արտակարգ ժողովներ

№№	Ձայնաւորների անունները և ազգանունները	Ժողովին մասնակցողների թիւը	Ժողովին չը մասնակցողների թիւը
1.	Աւետեանց Արտէմ	65	60
2.	Ագամեան Վաղարշակ	23	60
3.	Ալիեվ Քերբալայ Մամեդ	52	33
4.	Ամիրօվ Գրիգօրիյ	78	7
5.	Անտօնօվ Եակօվ	20	65
6.	Հասան-Ջալալեան Ալէքսանդր	37	48
7.	Աֆրիկեան Առաքել	27	58
8.	Աֆրիկեան Երուանդ	53	32
9.	Աֆրիկեան Կարապետ	9	76
10.	Բարոյեան Վաղարշակ	70	51
11.	Բունեաթօվ Արամ	81	4
12.	Գավրիլօվ Արտաշէս	74	11
13.	Հաջի Իրզա Հաջի Կեազիմ օղլի	47	38
14.	Եղիազարեան Համբարձում	34	51
15	Եղիազարեան Բորսեղ	34	51
16.	Եղիազարեան Վասիլէյ	40	45
17.	Եղիազարեան Գրիգոր	57	28
18.	Կացիեվ Հուսէյ-բէկ	16	69
19.	Կալանտարօվ Ֆադդէյ	41	44
20.	Կամսարական Կոնստանտին	82	3
21.	Գէորգեան Համբարձում	49	36
22.	Կորգանօվ Ալէքսանդր	57	28
23.	Կեալօվ Կարապետ	47	38
24.	Մակինսկիյ Պանա-խան	23	62
25.	Մելիքեան Յովհաննէս	36	49
26.	Մինասեան Ադամ	59	26
27.	Միր Բաղըեվ Միր Աբբաս	64	21
28.	Միր Բաղըեվ Միր Բագիր	26	59
29.	Միր Ջաֆար Միր Բագիր օղլի	19	66
30.	Յովհաննիսեան Յովհաննէս	34	51
31.	Պօղոսեան Վահան	71	14
32.	Սուլթանօվ Մամեդ աղա	13	72
33.	Թաղէոսեան Ֆադդէյ	38	47
34.	Տէր-Աւետիսեան Աւետիս	74	11
35.	Տէր-Յովհաննիսեան Հայկ	85	»
36.	Տէր-Սարգսեան Մկրտիչ	70	15
37.	Տէր-Խաչատրեան Գրիգոր	73	12
38.	Խաչատուրօվ Արշակ	3	82
39.	Գուդարաշեվ Արամ	68	17
40.	Շաֆիբէկօվ Իսրայիլ-բէկ	54	31
41.	Երիվանսէկիյ Աղա-խան	22	63

Երևանեան Քաղաքային Դումայի և Ուպրավայի քարտուղար՝
Գ. Վ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք զործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“.

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ
Փետրվարի 20-ից սկսած մինչեւ մարտի 3-ը վաճառվելու են
ՆՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

Մնացած պլաստինկաները նոր կատալօգը կազմելուց յետոյ
Սովորական փոքրերը 1 ր. 10 կ. փոխարէն — 75 կօպէկով
» մեծերը 2 ր. 20 կ. » 1 ր. 50 »
Էքստրա » 3 ր. 50 կ. » 2 ր. 50 »
Սովորական գիգանտ կոչած 4 ր. — » 3 ր. —
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
ԳՐԱՄՕՖՕՆ ԿԻԴՕՖՈՆՆԵՐԻՑ
TRADE MARK
GRAMMOPHON
ԳՈՐԾ. ԴՐՈՇՄ
Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 9.
Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія". 1—4